

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ԱԼՖՐԷԴ ԻՈՍԻՖԻ ՏԵՐՄԷՆԻ ՇՐՋԱՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐՕՔ (1915 Հոկտեմբեր-1916 Սեպտեմբեր)

ՌՈՒԲԷՆ ՍԱՀԱԿԵԱՆ
rubensahakyan58@gmail.com

ՄՈՒՏՔ

Հայ հասարակութիւնը Ա. Համաշխարհային Պատերազմի, յատկապէս ռուս-թուրքական ռազմաբեմում մարտական գործողութիւնները սկսուելուց յետոյ, սկզբնապէս լիայոյս էր, որ հնարաւորութիւն կը լինի հասնել իր երազանքին՝ ունենալ ինքնավար Արեւմտեան Հայաստան Ռուսական Կայսրութեան հովանու տակ: Այդ եւ այլ պատճառներով հայ հասարակական-քաղաքական եւ հոգեւոր շրջանակները մի կողմ դնելով նախորդ տարիներին կուտակուած դժգոհութիւնը եւ տարակարծութիւնները, որոշեցին իրենց ողջ ներուժը ներդնել ռուսական զէնքի յաղթանակի համար: Հայութիւնն իր ունեցած միջոցները ներդրեց դարաւոր ոսոխի դէմ յաղթանակի համար: Կազմաւորուեցին կամաւորական ստորաբաժանումներ, հայութիւնը կազմակերպեց զինուորական հիւանդանոցներ, սկսեց աջակցել տարբեր բնագաւառներում: Սակայն առաջին խոր հիասթափութիւնն ապրեց յատկապէս 1915ին Վասպուրականի յուլիսեան անսպասելի նահանջի ժամանակ, երբ հայութիւնը կրեց չափազանց լուրջ կորուստներ եւ վերացուեց Արամ Մանուկեանի գլխաւորած Վանի հայկական իշխանութիւնը: Դրանից յետոյ ռուսական վարչակարգն ամենայն լրջութեամբ սկսեց աշխատանքներ տանել Արեւմտեան Հայաստանը ռուսերով բնակեցնելուն: Նոյնիսկ խօսւում էր «Վանի Կազակութիւն» կազմելու մասին[1]: Ռուսների կողմից գրաւուած Արեւմտեան Հայաստանի բնակավայրերում նշանակուեցին պաշտօնեաներ, որոնք բառիս բուն իմաստով քայլեր կատարեցին վերը նշուածն իրագործելու համար: Եւ ահա այդ ժամանակ Վանի Օկրուգի (գաւառակ) պետ է նշանակւում ոստիկանական պաշտօնեայ, փոխգնդապետ Ալֆրէդ Տերմէնը, որը հակառակ իշխանութիւնների կողմից տրուած հրահանգների սկսում է օժանդակել տարբեր հայկական կազմակերպութիւններին Վանի վերաշինութեան գործում: Նա, հաւանաբար, ռուսական բացառիկ պաշտօնեաներից էր, որի մասին հայկական կողմը՝ կուսակցական, քաղաքական եւ հոգեւոր, երբեւէ որեւէ բացասական գնահատական չի տուել, հա-

կառակը՝ գրեթէ բոլորը միաբերան խօսում էին նրա ծաւալած անձնազոհ եւ հայանպաստ գործունէութեան մասին[2]: Դա էր պատճառներից մէկը, որ նա յայտնուեց մեր ուշադրութեան կենտրոնում եւ նպատակայարմար գտանք լուսաբանել նրա գործունէութիւնը Վան-Վասպուրականում:

1915ի Վանի յուլիսեան անսպասելի նահանջից յետոյ հայութիւնը գտնւում էր ընկերատնտեսական եւ բարոյահոգեբանական ծանր վիճակում: Տեղի հայութեանը հասցուել էր մարդկային ու նիւթական ծանր հարուած: Այնուամենայնիւ Հայոց Եկեղեցին, հասարակական եւ քաղաքական կազմակերպութիւնները ձեռնամուխ են լինում Վասպուրականի վերականգնման աշխատանքներին:

Վասպուրականցիների եւ ընդհանրապէս արեւմտահայերի ձգտումը՝ օր առաջ վերադառնալ հարազատ վայրեր, ունէր իր այլ հիմնաւոր պատճառները: Ռուսական իշխանութիւնները վճռել էին գաղութացնել Օսմանեան Թուրքիայից գրաւուած հայկական տարածքները:

Վանի հայկական իշխանութեան լուծարումից յետոյ ռուսական իշխանութիւնները կազմում են Վանի Նահագապետութիւն, որը գլխաւորում է զօրավար Պաւէլ Վորոնովը[3], իսկ Վանի գաւառակը՝ փոխգնդապետ Ալֆրէդ Տերմէնը: Վերջինիս կենսագրութեան մասին սակաւ տեղեկութիւններ են պահպանուել: Ըստ տուեալների՝ Տերմէնները ծագում են Ֆրանսիայից: 24 Օգոստոսի 1572ին Փարիզում հուգենոտների սպանդից մի մասին յաջողւում է փրկուել եւ ապաստանել տարբեր երկրներ, այդ թւում՝ Ռուսաստան:

Յայտնի է, որ 1860ից մինչեւ 1900ի սկզբները Ս. Պետերբուրգում ապրում էր վաճառական Իոսիֆ Շարլ Տերմէնը: Ենթադրւում է, որ նա է եղել Տերմէն եղբայրների հայրը[4]:

Ա. Տերմէնի մանկութեան եւ պատանութեան տարիների մասին չյաջողուեց որեւէ տեղեկութիւն գտնել: Նա եղել է Մուկդէնի (այժմ Շենիան) ոստիկանապետը, 1898ին՝ Անդիջանի[5] տեղամասային պրիստաւը[6], ծառայել է Ս. Պետերբուրգի Ալեքսանդրօ-Նեւսկեան պահեստային գնդում:

Միջին Ասիայում եւ Հեռաւոր Արեւելքում ծառայութեան ընթացքում նա ոչ միայն ուսումնասիրել է տեղաբնիկների բարքերը, աւանդոյթները, կրօնը եւ լեզուն, այլեւ հետազօտել, տեղեկութիւններ ու հաւաքածու է կազմել տեղի բնութեան եւ կենդանական աշխարհի մասին: Գատչինայում նա նոյնիսկ իր տան մի հատուածը յատկացրել էր հաւաքածուն ցուցադրելու համար: Երբ նա ինչ-ինչ պատճառներով բացակայում էր, փոխարինում էր կինը[7]՝ հանդէս գալով որպէս ուղեվար այցելուների համար: Իսկ այցելուները շատ էին, ներառեալ տեղի գիմնազիայի աշակերտները: Իր հետազօտութիւնների համար Տերմէնն արժանացել է Ռուսական Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան անդամութեանը:

1913ին Տերմէնների ընտանեկան տնամերձ հողամասը վերածուել էր օրինակելի այգեգործական տնտեսութեան, որտեղ աճեցւում էին տարբեր

տեսակի մրգատու ծառեր, թփեր, հազուագիւտ ծաղիկներ եւն.: Գատչինայի բնակիչների համար կազմակերպւում են այգեգործական եւ բանջարաբուծական անվճար դասընթացներ:

Իր աշխատութեան մեջ Տերմէնը ներկայացնում է, թէ ինչպիսի յատկութիւններ ու սկզբունքներ պէտք է ունենայ ոչ-ռուս բնակչութեան շրջանում ծառայող պաշտօնեան՝ վարչակառավարիչը: Ըստ նրա՝ 1. Վարչակառավարիչը մշտապէս պէտք է յիշի, որ նա դաստիարակ է, քանի որ պէտք է ուսումնասիրի իր ենթակայութեան տակ գտնուող ժողովրդին, նրա անցեալն ու ներկան, մշտապէս պէտք է հետազօտի նրա հետ կատարուող փոփոխութիւնները, քանի որ դիւրին է հասնել վայրենուն հասկանալու մակարդակին, քան հակառակը: 2. վարչակառավարիչն իր առջեւ ունենալով վերջնական նպատակը, ղեկավարելով իր ենթակայութեան տակ գտնուող ժողովրդին չպէտք է նրան զարգացնի թռիչքներով, այլ պէտք է առաջնորդուի բնական բարեշրջումով, տեղաբնիկների շրջանում աստիճանաբար ներդնելով իր ժողովրդի աշխատանքի արդիւնքները: Այս նպատակին հասնելու համար վարչակառավարիչը պէտք է գտնուի բարձրութեան վրայ, տեսադաշտից չկորցնելով վերջնական նպատակը՝ մշտապէս իր առջեւ ունենալով իր ենթակայութեան տակ գտնուող ժողովրդական իդէալը, որը երբեք չի կարելի ոտնահարել, իսկ տեղաբնիկների շրջանում աշխատել վայելել յարգանք ու խրախուսել ձգտումը դէպի բարին[8]:

Տերմէնի համոզմամբ, տեղաբնիկների կողմից ժամանակ առ ժամանակ բռնկուող ապստամբութիւնների պատճառը կարող են հանդիսանալ տեղական իշխանութիւնների կողմից ոչ-ճիշտ, անհեռատես քաղաքականութիւնը, երբ հաշուի չեն առնւում տեղացիների նահապետական սովորոյթները: Որպէս օրինակ, նա վկայակոչում է 1898ի Անդիժանում (ներկայիս՝ Ուզբեկստանում) բռնկուած ապստամբութիւնը: Ելոյթը ճնշուեց, ղեկավարը՝ իշխան[9] Մուհամէդ Ալին ձերբակալուեց: Նա դատարանում յայտարարեց, որ ռուսական տիրապետութեան ընթացքում տեղաբնիկները վերածուել են գողերի, բարքերն այլասերուել, մարդիկ դարձել հարբեցող[10]:

Հայ հասարակական-քաղաքական գործիչ, երգիծաբան, գիւղատնտես (սոցիալիստ-յեղափոխական) Աշոտ Աթանասեանը (1870-1941)[11], որ քաղաքական գործունէութեան բաւականին փորձ ունէր, նկարագրում է իր առաջին հանդիպումը Տերմէնի հետ եւ ստացած տպաւորութիւնները. «*Վանի նահանգապետը 50 տարեկանի մօտ մի անձ է, թիկնաւէտ, միջին հասակի, իր շարժումների մէջ վերին աստիճանի քաղաքավարի եւ սիրալիր: Նրա ֆրանսիական ծագումը դրել է Տերմէնի վրայ իր կնիքը. եռուն, ոգեւորուող, երազող եւ անկեղծ: Նա ամբողջովին տարուած էր իր առաջիկայ պաշտօնի եւ միսսիայի խնդիրներով ու հոգսերով*»[12]:

Աթանասեանը վկայում է, որ շրջանապետը լի է իր առջեւ դրած պարտականութիւնները մեծագոյն պատասխանատուութեամբ իրականացնելու մտադրութեամբ: Տերմէնը համոզուած էր, որ առանց բնակչութեան ա-

ջակցութեան իրեն չի յաջողուի որեւէ գործ, նա հետեւեալն է ասել. «*Ծրագիրներս շատ են, բայց ինչ՞ կարող եմ անել մէնակ, առանց հասարակութեան աջակցութեան, առանց ինտելիգենտ ուժերի, աշխատաւորների: Ահա դրանք են, որ ներկայումս պակասելու են ինձ*»[13]:

Աթանասեանի այն հարցին, թէ ինչպիսի քաղաքականութիւն է վարելու Վանում, Տերմէնը առաջարկում է ընթերցել իր գիրքը, որից գիւղատնտեսը մէջբերում է հետեւեալ տողերը. «*Ադմինիստրատորը կառավարութեան ներկայացուցիչն է եւ, որպէս այդպիսին, նա պարտական է իրան հաւատացած ազգաբնակութեանն առաջնորդել պրոգրէսսի ուղիով... ադմինիստրատորը կրթող անձն է, այս բառիս ամենաբարձր մտքով*»[14]:

Տերմէնին մտահոգում էր վասպուրականցիների անկանոն վերադարձը ծննդավայր, ուստի առաջնահերթ խնդիր է համարում կանոնաւորել վերադարձը եւ որպէս առաջին քայլ՝ կազմակերպում է մօտ երկու հազար փախստականների վերադարձը: Նա ուսումնասիրելով նրանց վերադարձի առաւել անվտանգ ճանապարհը եւ եկել էր եզրակացութեան, որ համեմատաբար անվտանգ է Խոյ-Սալմաստ-Բաշկալէ ուղին[15]:

Շրջանապետը առաջնահերթ է համարում նահանգի բնակավայրերի վիճակը պարզելը: Իր ունեցած տեղեկութիւնների համաձայն գիւղերի մեծ մասը քարուքանդ է եղել. նա նպատակայարմար է գտնում ոչ թէ վերականգնել աւերուածները, այլ հիմնել նորերը՝ «*Պէտք է նոր ձեւի գիւղեր հիմնել. կանոնաւոր լայն փողոցներով, հրապարակով, եկեղեցիով, դպրոցով եւ մանաւանդ ծառերով, ծառերով ու ծառերով. պէտք է դուրս գալ այն որջերից, որոնց մէջ ապրում են հայերը, նոր ձեւի տներ են հարկաւոր*»[16]:

Տերմէնը մանրամասն հարցնում է Աթանասեանից, թէ ինչ վիճակում են հացահատիկի ցանքերը, որքան հացահատիկ է հաւաքուել եւ պահուել, հնարաւո՞ր է ապահովել 100,000ը անցնող բնակչութեան կարիքները:

Շրջանապետին անհանգստացնում է նաեւ որբերի հիմնախնդիրը: Նրա համոզմամբ պէտք է պայմաններ ստեղծել ոչ միայն նրանց Վան տեղափոխելու, այլեւ երեխաների ապագան հոգալու համար:

Աթանասեանն իր տպաւորութիւնների մասին գրում է. «*Ամբողջ երեք օր յաճախ հանդիպում եւ զրուցում էինք Պ. Տերմէնի հետ, եւ մեր ստացած տպաւորութիւնը նրանից, որպէս կուլտուրական անձից եւ նրա կառավարչից, վերին աստիճանի նպաստաւոր էր: Տերմէնը քաղաքականութեամբ չէր զբաղւում, նա որպէս ֆրանսիացի, կուլտուրայի, առաջադիմութեան մարդ է, եւ ով որ կարող է նրան նպաստել այդ մտքով ու ուղիով, թող անի: Դրանից կը շահի միայն երկիրն ու ժողովուրդը:*

Պէտք է աջակցել անվերապահ... նոր մարդ է եւ մէնակ, շատ մէնակ»[17]:

Այս վերջին միտքը բացարձակ ճշմարտութիւն էր: Ռուսական Կայսրութեան տարբեր ժողովուրդների շրջանում իր ունեցած ծառայութեան ընթացքում Տերմէնը, ի տարբերութիւն Արեւմտեան Հայաստանում զանազան պաշտօնների նշանակուած ղեկավարների, կուտակել էր զգալի

փորձ, որը յատուկ չէր ռուս շատ ու շատ աստիճանաւորների: Դրանց մեծ մասը կայսրութեան տարբեր գաւառներից եկած աստիճանաւորներ էին, որոնք որոշակի փորձ չունէին աշխատելու հայերի հետ: Նրանք առաջնորդւում էին իշխանութիւնների այն հրահանգով, որ պէտք է հող նախապատրաստել Արեւմտեան Հայաստանը ռուսերով վերաբնակեցնելու: Ուստի նրանցից ոմանք, ինչպէս օրինակ Դիադինի կառավարիչ պարոն Հուէնը ցանքատարածութիւններ եւ սերմացու էր տալիս հայ փախստականներին, միայն այն նպատակով, որ նրանք հող մշակեն ու հիմք նախապատրաստեն ռուս վերաբնակիչների համար[18]: Հակառակ նման կարգի աստիճանաւորների՝ Տերմէնը ռուս պաշտօնեայ էր, որն իր ծառայութիւնն իրականացնում էր ոչ թէ արհամարհելով կամ նուաստացնելով տեղաբնիկներին, այլ փորձում էր խորանալ նրանց պատմութեան եւ հիմնախնդիրների մեջ, հասկանալ նրանց նպատակները:

Ինչպէս երեւում է հայ հասարակական-քաղաքական մի շարք գործիչների վկայութիւններից, Տերմէնն իր ամէնօրեայ գործունէութեամբ ձգտում էր շահել հայութեան վստահութիւնը, ցոյց տալ, որ ինքն ամբողջովին վստահում է հայերին: Տարիներ ծառայելով Արեւելքում, նա քաջ գիտէր թէ ասիացիները ինչպիսի վերաբերմունք ունեն ընտանիքի նկատմամբ, ուստի պարտադիր էր համարել Վան բերել իր ընտանիքին՝ ակնառու կերպով ցուցադրելով, որ յարգում է ընտանիքը եւ պատրաստ է իւրայինների հետ միասին յաղթահարել հայութեան բոլոր դժուարութիւնները: Նա ոչ միայն մտածում էր դժուարութիւնների յաղթահարման մասին, այլեւ առաջարկում էր նորովի կազմակերպել հայութեան կենցաղը: Նա նման չէր նախորդ պաշտօնեաների, որոնք ձգտում էին բոլոր պարագաներում ցուցադրել իրենց գերադասութիւնը տեղաբնիկներից, մի շարք դէպքերում արհամարհել նրաց տարրական խնդիրները: Շրջանապետն աշխատում էր խորանալ հայութեան գրեթէ բոլոր հիմնախնդիրների մէջ եւ փորձում լուծում տալ՝ իր հնարաւորութեան սահմաններում: Դա նկատել էր ու գնահատել հայ ազգային-ազատագրական շարժման նշանաւոր գործիչ Արմենակ Եկարեանը. «*Գնդ. (փոխգնդապետ - Ռ.Ս.) Տերմէնի բարեացակամ վերաբերումը դէպի հայերս, կարելի է ըսել անսահման էր*»[19]:

Եկարեանը՝ յանձին Տերմէնի, տեսնում էր իր գործին նուիրեալ անձնաւորութիւն, մարդ, որ բաւականին փորձ ունէր ազգային փոքրամասնութիւնների շրջանում աշխատելու համար: Աթանասեանը լինելով Արեւմտեան Հայաստանի տարբեր գաւառներում, տեսնում էր թէ ինչպէս է վերաբերւում հայութեան նկատմամբ այնտեղ ուղարկուած ռուս պաշտօնեաների զգալի մասը: Հայութեան մէջ դեռ թարմ էր Վանի յուլիսեան այսպէս կոչուած «նահանջը», երբ 100,000ից աւելի հայութիւն, խուճապահար, հարկադրուած էր լքել հայրենի վայրերը, անցնել փորձութիւններով լի ճանապարհ, տալով մեծ թուով զոհեր[20] եւ ահա ասպարէզ է գալիս մի ոչ-հայ անձնաւորութիւն, որը ցանկանում էր իր հնարաւորութեան սահմաննե-

ռում, գուցէ եւ աւելի, օգնել փախստականներին՝ վերադառնալ հայրենի եզերքները: Տերմէնն ունէր մեծ ծրագրեր: Նա, յանձին հայ ժողովրդի, տեսաւ մարդկութեան այն հատուածին, որն ընդունակ էր ոչ միայն ողբալ իր կորուստները, այլեւ կարճ ժամանակում վերականգնել աւերուած տնտեսութիւնը: Կարելի է ասել, որ Տերմէնն ինքն էլ «վարակուեց» հայութեան ոգեւորութեամբ ու ամենայն եռանդով սկսեց աշխատել, որպէսզի օգնի վասպուրականցուն ոչ միայն վերադառնալ, այլեւ վերսկսել իր ստեղծարար գործունէութիւնը՝ վերականգնել աւերուած տներն ու տնտեսութիւնը:

Մեր կարծիքով, Տերմէնը տեսնելով հայ ժողովրդի ողբերգութիւնը, հաւանաբար յիշեց Բարթուղիմէոսեան գիշերը, երբ կաթոլիկները զանգուածաբար ոչնչացրին հուգենոտներին, որոնց թւում էին հրաշքով փրկուած իր նախնիները: Նոյնը կրկնւում էր նաեւ օսմանեան տիրապետութեան ժամանակ, գուցէ դա էր պատճառը, որ նա ամենայն անկեղծութեամբ նուիրուեց Վասպուրականի վերաշինութեան գործին՝ հակառակ մի շարք ռուս պաշտօնեաների ու զինուորականների կրաւորական վերաբերմունքին: Բացի այդ, շրջանապետը տեսնում էր այն ուժը, որ հնարաւորութիւն կը տար ռուսական իշանութիւններին աստիճանաբար իւրացնել նորանուաճ հողերը՝ Արեւմտեան Հայաստանն, առանց քրդերի օժանդակութեան: Վերջիններս որոնք պատերազմի ընթացքում հանդէս եկան որպէս օսմանեան իշխանութիւնների հաւատարիմ գործակիցներ եւ իրենց գործողութիւններով աշխատեցին արգելք հանդիսանալ ռուսական Կովկասեան բանակի նորանոր յաջողութիւններին:

Իգդիրում Տերմէնը հանդէս է գալիս պաշտօնական յայտարարութեամբ՝ պահանջելով վասպուրականցիներից առայժմ ծննդավայր չվերադառնալ[21]: Դա, հաւանաբար արւում է այն պատճառով, որ ձմեռ էր, ճանապարհները գրեթէ անանցանելի էին: Բացի այդ յայտնի չէր, թէ ինչպէս կարելի է ապահովել վերադարձողների անվտանգութիւնը, մինչ քրտական աւազակախմբերը պարբերաբար յարձակումներ էին գործում ոչ միայն տուն վերադարձողների, այլեւ ռուսական զօրամասերի առանձին ստորաբաժանումների վրայ: Տերմէնը ցանկանում էր անձամբ անցնել ողջ ճանապարհը եւ միայն դրանից յետոյ թոյլատրել հայերին վերադառնալ:

Շրջանապետի հետ ճանապարհ են ընկնում նաեւ վասպուրականցիները: Նրանց ուղեկցում են կազակներ եւ նորակազմ հայկական ոստիկանութեան մի մասը՝ բաղկացած ամերիկահայ կամաւորներից: Այս ամէնը, յատկապէս հայ ոստիկանների ներկայութիւնը, ոգեւորում է վերադարձողներին, քանի որ յոյս ունէին, որ կը կարողանան որոշ օգնութիւն ստանալ եւ ձմեռել, իսկ գարնանը վերսկսել վերաշինութեան ու գիւղատնտեսական աշխատանքները: Վան տանող ճանապարհն անտանելի ծանր է՝ ցեխ, ձիւն: Յատկապէս ծանր վիճակում են ծնողների հետ վերադարձող մանուկները. *«Շատերը հեգիոգն կ'երթան իրենց զաւակներու ձեռքէն բռնած կամ զանոնք կռնակնին առած: Պ. Տերմէնը մանուկներուն շաքար*

կու տայ, որպէս զի քիչ մը ուժ առնեն: Մարդու գութ կը շարժի, երբ կը տեսնէ, որ փոքրիկներու մեծ մասը տժգոյն են եւ կը տառապին»[22]:

Շրջանապետը տեսնելով, որ երեխաներից մէկն ուժասպառ լինելով ի վիճակի չէ այլեւս քայլել՝ նրան իր կառքն է վերցնում: Ճանապարհին շարունակում են հանդիպել Վասպուրական վերադարձողներ: Կրկին Տերմէնն իր կառքում տեղ է տալիս երկու երեխաների, որոնք երկարատեւ ճանապարհորդութիւնից ուժասպառ էին եղել: Ինչպէս հաղորդում է *Մշակը*՝ Նոյեմբերին Վանի շրջանապետ բարեյաջող հասնում է Վան[23]:

Շրջանապետի գործունէութեան սկզբնական շրջանը բաւականին բարդ էր: Վասպուրականը, յատկապէս Վանը դարձել էր Կովկասի փոխարքայութիւնից եկող կողոպտիչների համար ցանկալի վայր[24]: Յելուզակները առաջին հերթին թալանում էին անտէր մնացած տները, ապա փնտռում էին տանտէրերի թաքցրած իրերը: Ուստի պատահական չէ, որ դեռեւս Վան հասնելիս Տերմէնի առաջին հրամաններից մէկը լինում է կողոպտիչների ձերբակալումը եւ գողոնի գրաւումը[25]:

Տերմէնի հաստատուելը Վանում հնարաւորութիւն է տալիս ռուսական կառավարական հաստատութիւններին, առաջին հերթին Կովկասի փոխարքային առընթեր Առաջին Համաշխարհային Պատերազմի Ռազմական Գործողութիւնների Թատերաբեմից Փախստականների Տեղաւորման Վարչութեան գլխաւոր լիազօր, զօրավար Վասիլի Թամամշեւին (Թամամշեան) Իգդիր ուղարկել սննդատու ջոկատ, որտեղ կենտրոնանում է Վասպուրական վերադարձողների մի մասը[26]:

Ինչպէս նշում է Վանում Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան լիազօր Գրիգոր Օհանջանեանը. «*Հայը՝ Վորոնովի եւ Տերմէնի օրով ամենասարսափելի տարին էր: Տերմէնի անզօր համակրանքը դէպի հայերը՝ աւելի բորբոքում էր Վորոնովի ատելութիւնը դէպի վասպուրականցին*»[27]: Երբ 1917 Փետրուարից յետոյ նահանգից հեռանում են զօրավար Վորոնովը եւ իշխան Շախովսկին[28], վերաբերմունքը դէպի հայերը փոխուեց: Իշխանութիւնները, բացառութեամբ միքանի գիւղերի պարետների, հասկացան, որ «*քրտերի հետ բարեկամանալն անկարելի բան է*»[29]:

Օհանջանեանի կարծիքով, 1917 Փետրուարից զօրավար Վլադիմիր Բուրկովսկուն[30] Վանի նահանգապետ նշանակելը որոշակի յոյսեր է առաջացրել տեղի հայութեան շրջանում: Նրա համոզմամբ, Բուրկովսկին «*եկել է ո՛չ թէ իշխելու, այլ կառավարելու...*»[31]: Յուսադրող էին նահանգապետի գործնական առաջին քայլերը: Նա առաջին հերթին կատարում է նահանգի վարչական բաժանումը եւ նշանակում գաւառների կառավարիչներին եւ պաշտօնեաներին[32]: Օհանջանեանն առաջարկում է Հայկական կենտրոնական Բիւրոյին թարգմանիչ նշանակել նահանգապետարանում, քանի որ հաստիքներում նման պաշտօն նախատեսուած չէ: Բացի այդ, անհրաժեշտ է գաղթականներին օգնող խորհրդատու իրաւաբանական ծառայու-

թիւն, որը հնարաւորութիւն կը տայ ոչ միայն իրաւաբանական խորհրդատուութիւն կազմակերպել, այլեւ արագօրէն լուծել ծագող խնդիրները:

1915 Նոյեմբերի 23ին Վան են գալիս ՀՎՅի չորս անդամներ, որոնք ծանօթանում են քաղաքում եւ շրջակայ գիւղերում իրականացուող աշխատանքներին: Նրանք հանդիպում են Տերմէնին, ներկայացնում աշխատանքային ծրագիրը: Դրանք առաջին հերթին վերաբերւում էին Վանի դատարանին, ոստիկանութեանը եւ քաղաքի հիմնախնդիրներին:

Տերմէնը թոյլատրում է կազմակերպել տեղական իշխանութեան մարմիններ՝ քաղաքապետարան, ոստիկանութիւն, Երկրագործական Տեսչութիւն եւ գիւղական վարչական մարմիններ: Սկզբնապէս Վանի քաղաքապետն էր Ռուբէն Շատուրեանը[33], որն այդ պաշտօնում աշխատում է ութ ամիս: Նրան փոխարինում է Աւետիս Թերզիպաշեանը[34]: Վերջինս հանդիսանում էր Վարագայ Վանքը վերականգնող հոգաբարձութեան անդամ[35]: Դատարանը գլխաւորում է Աղաբէկ Համբարեանը, որի օգնականն էր Յակոբ Սմսարեանը: Համբարեանի կողմից դատական վարոյթներն ընթացել են «Վանի 'ադաթներով' եւ իր խղճով»[36]:

Ըստ ատենի մամուլի հրապարակումների՝ քաղաքային ոստիկանութիւնը սկզբնապէս գլխաւորել է Արսէն Գէորգ-Բէկեանը, ապա՝ Նշան Յակոբեանը, Հրանտ Գալիկեանը: Նա ունէր տեղակալ եւ 25 ոստիկաններ: Երկրագործական մարմինը անցնում է Կարապետ Գարախանեանի ղեկավարութեան տակ: Նա պէտք է ուսումնասիրէր հողագործութեան հետ կապուած հիմնախնդիրները՝ քայքայուած գիւղատնտեսութիւնը վերականգնելու համար: Վանը բաժանւում է հինգ վարչական շրջանների[37]:

Գաւառը բաժանւում է երեք վարչական միաւորի՝ Ա. շրջանը կազմում է քաղաքի շրջակայքում գտնուող գիւղերը, Բ. շրջանը՝ Թիմարի գիւղերի մի մասը, իսկ Գ. շրջանը՝ Արճակի եւ Թիմարի մնացած բնակավայրերը: Ա. եւ Բ. շրջանները գլխաւորում է Փանոս Մարութեանը[38]:

Տերմէնի առաջնահերթ խնդիրներից էր 50 որբերին (թիւն իրականում շատ աւելի էր), տաք հագուստով եւ վերմակներով ապահովելու հարցը: Նպաստամատոյցի նախագահ Դաւիթ խան Աւան Եուզբաշեանին ուղղուած հեռագրում շրջանապետը յաւելում է, որ «*Ամէն օր գալիս են նորերը* (որբեր - Ռ.Ս.)*: Քաղաքում գնելու համար ոչինչ չկայ: Երեխաներին հագցնելու կամ ծածկելու ոչ մի բան չկայ: Ցրտերը սկսուել են*»[39]:

1915 Հոկտեմբերի դրութեամբ Վան վերադարձել էին մօտ երկու հազար հոգի, մի մասը ընտանիքներով: Ծննդավայր վերադարձողների թիւն իհարկէ շատ աւելի էր, սակայն նրանց խոչընդոտում էր Վասպուրականում պարենի սուր պակասը:

Տերմէնի առաջարկութեամբ կազմակերպւում է ՀՎՅն[40], որը, բացի Վասպուրականի օգնութեան կազմակերպումը, պէտք է ապահովի քաղաքացիներից կազմուած ոստիկանութեան ծախսերը: Յանձնաժողովի կազմաւորումը պաշտօնապէս ճանաչել է տեղական զինուորական հրամանա-

տարութիւնը եւ ողջունել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե.ն[41]: ՀՎՅն հայրենակիցներին դիմում է յատուկ կոչով, որտեղ մասնաւորապէս ասուած էր. «*Վասպուրականցի մտաւորականները իրանց յոյսը հիմնել են ռուսաց բարձր իշխանութեան կողմից նորերս Վանի նահանգի կառավարիչ կարգուած ռուսական զօրքի գնդապետ (փոխգնդապետ - Ռ.Ս.) Ալֆրէդ Տերմէնի վրայ, որ դիմել էր այդ մտաւորականներին, առաջարկելով կազմել թիւրքահայերից քաղաքացիական ոստիկանութիւն նահանգի ազգաբնակութիւնը աւազակներից եւ աւարառութիւնից պաշտպանելու եւ երկրի կարգի ու ապահովութեան վրայ հսկելու համար, խոստանալով ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալ եւ այլ քաղաքական ձեռնարկներին*»[42]:

Յանձնաժողովի առաջարկութեամբ ու շրջանապետի համաձայնութեամբ ոստիկանութիւնը գլխաւորելու էր Եկարեանը[43], անձնակազմը հաշուելու էր 200 հոգի, ոստիկանութիւնը ապահովուելու էր զէնքով[44]: Եկարեանի օգնականը՝ ամերիկեան բանակի սպայ Ճիմ Չանգալեանն էր[45]: Տերմէնը նաեւ խոստացել էր վերադարձող վասպուրականցիներին տրամադրել հողեր՝ գիւղատնտեսական աշխատանքները սկսելու համար:

Ոստիկանութեան ներկայութիւնը խիստ անհրաժեշտ էր: Նահանգը Կովկասեան բանակի գրաւումից յետոյ քրտերի մի մասը սկսել էր վերադառնալ իրենց բնակավայրերը: Վերադառնում էին հիմնականում կանայք ու երեխաները, իսկ տղամարդկանց մեծ մասը շարունակում էր մնալ լեռներում: Ընտանիքներն ուղարկելով տները, նրանք դրանով ձեռք էին բերում արագ տեղաշարժուելու հնարաւորութիւն եւ ռուսների հետապնդման դէպքում կարող էին առանց դժուարութեան հեռանալ: Այդ էր պատճառը, որ Վանի հայութիւնը մեծ տեղ էր տալիս ոստիկանութեան, քանի որ նրա ներկայութիւնը կարող էր զսպող դեր ունենալ: Առաջին ահազանգը ստացւում է Բերկրիից, որին սպառնում էին քրտերը: Տերմէնի հրամանով այնտեղ են շտապում մօտ յիսուն ոստիկան՝ բնակչութեան հետ միասին թշնամուն հակահարուածելու համար:

ՀՎՅին յատկապէս հետաքրքրում է շրջանապետի վերջին առաջարկութիւնը՝ բնակիչներին հողատարածութիւններով ապահովելու մասին, մինչեւ բուն աշխատանքներին անցնելը: Դիմում են կաթողիկոս Գէորգ Ե.ին՝ ստանալու համար նրա հաւանութիւնը եւ հրահանգները: 1915 Հոկտեմբերի 10ին № 1755 գրութեամբ կաթողիկոսական դիւանը հետեւեալ պատասխանն է յղում, ուր մասնաւորապէս ասուած էր. «*Հայ գիտակից մասի այն բոլոր ջանքերը եւ աշխատանքները, որոնք իրապէս նպաստելու են Վասպուրականի, մասնաւորապէս Վան քաղաքի վերաշինութեան, բարեկարգութեան եւ Վասպուրականի ազգային-կրօնական հաստատութիւնների, վանքերի, եկեղեցիների, դպրոցների եւ այլ պատմական յիշատակարանների պահպանութեանն ու բարգաւաճմանը, այս ամէնը բնականաբար, արժանանալու է Վեհ. Հայրապետի քաջալերութեանը, բարձր հովանաւորութեանը եւ օրհնութեանը*»[46]: Միաժամանակ կաթողիկոսա-

կան դիւանը տեղեկացնում է, որ Գէորգ Ե.ը երեք հազար ռուբլի է յատկացրել եւ յետագայում եւս յանձնաժողովին գումարներ կը տրամադրի վերաշինութեան գործի համար[47]:

ՀՎՅՆ կոչով դիմում է Ռուսաստանում, Եւրոպայում եւ Ամերիկայում, Եգիպտոսում ու Հնդկաստանում բնակուող հայրենակիցներին խնդրելով նիւթական օժանդակութիւն տրամադրել Վանի վերաշինութեան համար:

Թիֆլիսի քաղաքապետ Ալեքսանդր Խատիսեանին ուղղուած 1915 Հոկտեմբերի 15ի հեռագրում է շրջանապետը յայտնում է, որ իր հետ Վան են վերադառնում մեծ թուով գաղթականներ՝ «*Վանում եւս շատ որբեր են ենթադրւում լինել: Անհրաժեշտ է անմիջապէս բանալ հիւանդանոց եւ որբանոց Վանում: Ահագին կարիք կայ տաք իրերի*»[48]:

Տերմէնն ամենայն խստութեամբ հետեւում էր, որպէսզի անբնակ մնացած տները չկողոպտուեն, իսկ շինութիւնները չաւերուեն: Շրջանապետը նաեւ միջոցներ է ձեռնարկում, որպէսզի Ջուլֆայով Վան վերադարձողների անվտանգութիւնը ապահովի[49]: Գողութեան մի շարք դէպքերի դիմաց, նա առաջարկում է երկրապահ գնդին կազմակերպել ժամանակաւոր բանտ, «...օրավարձով վճարովի բանտապահ զինուորներ»ով[50]:

Շրջանապետի համար առաջնահերթ խնդիրներից էր պարզելու Վանի եւ շրջանի որբանոցներում գտնուող երեխաների, նրանց ծնողների ունեցած գոյքի վերաբերեալ տեղեկութիւններ, որպէսզի «*Ես կարողանայի պահպանել այդ որբերի համար նրանց ժառանգութիւնը, հաստատելով նրանց վրայ եւ խնամակալութիւն կարգելով այդ որբային գոյքի վրայ*»[51]:

Տերմէնին յոյսեր է ներշնչում հայկական հասարակական, ռուսական, ամերիկեան կազմակերպութիւնների վճռակամութիւնը՝ աշխատել ծանրագոյն պայմաններում եւ նպաստել բնակչութեան վերադարձին, ուստի իր հնարաւորութեան սահմաններում ձգտում էր բարենպաստ պայմաններ ստեղծել Վան-Վասպուրականի վերականգնման եւ բնակչութեան վերադարձի համար: Այսպէս, Նոյեմբերի վերջերին Վան է պատրաստում մեկնել Համառուսաստանեան Քաղաքների Միութեան կովկասեան բաժանմունքի ջոկատը՝ 10 սայլերով, լիազօր Աթանասեանի գլխաւորութեամբ: Ջոկատը բաղկացած էր առողջա-մաքրութեան եւ որբանոցային յանձնաժողովից, ընդհանուր առմամբ 28 հոգի: Նրանք Վան էին տանում 200 մահճակալանոց հիւանդանոցի եւ 120 որբերի համար նախատեսուած դեղօրայք եւ կահաւորանք: Նախատեսւում էր բնակչութեանը բաժանել վերմակներ եւ 40 հազար ձմեռային հագուստ, որոնց մի մասը ստացուել էր ԱՄՆից եւ Մոսկուայից[52]: Աթանասեանի վկայութեամբ. «*Քաղաքների Միութեան օտրիադի (ջոկատ - Ռ.Ս.) տեղս գալով մի կենդանութիւն մտաւ մեռած եւ աւերուած քաղաքիս մէջ. դա անչափ ոգեւորում է բոլորին*»[53]:

Տերմէնի եռանդուն գործունէութեան մասին որոշ պատկերացում ենք ստանում *Վան-Տոսպ*ում տպագրուած «Դրութիւնը Վանում» յօդուածից, որտեղ թղթակիցը յայտնում է, որ չնայած մթերքների պակասութեանը,

քաղաքը աստիճանաբար սկսում է վերականգնուել: Հաղորդագրութիւնում մասնաւորապէս ասուած է. *«Ոստիկանական չորս շրջանակներ կազմուած են: Թալանին վերջ տալու նպատակով Պ. Տերմէնը խիստ յայտարարութիւն ըրած է: ... Հնձող մեքենաներ կան, որոնք կ'աշխատին, 4-5 ջրաղացներ սկսած են բանիլ, փուռ ալ բացուած է: Երկրապահներու խումբի ներկայութիւնը մեծ մխիթարութիւն է ժողովրդի համար: Սակայն այստեղ կան գարշելի տիպեր, որոնք կ'ուզեն շարունակել իրենց չարաշահութիւնները»*[54]: Ոստիկանութեան, կամ ինչպէս նրանց անուանում են երկրապահների ներկայութիւնը զգալի չափով զսպող ազդեցութիւն է ունենում: Կողոպուտները եւ տների աւերումները պակասել են, իսկ երեկոյեան փողոցներում շրջում են պարեկներ[55]:

Հայերի յարգանքը եւ ակնածանքը եկեղեցու նկատմամբ չի վրիպում շրջանապետի ուշադրութիւնից, նա տեսնում է հայ հոգեւոր շինութիւնները, սակայն ստեղծուած բարդ պայմաններն իրենց կնիքն էին դրել Վանում բնակուողների կենցաղի վրայ: Հաւանաբար դա նկատելով, տեսնելով մարդկանց խղճուկ վիճակը Տերմէնը 1915 Նոյեմբերի 15ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե.ին յղած նամակում համառօտ ներկայացնում է Վան քաղաքում ծուարած բնակչութեան անմխիթար վիճակը, որոնց թիւը հասնում է շուրջ 5,000ի, գրում է. «*Նրանց* (վերադարձածներին - Ռ.Ս.) *հոգեպէս միաւորելու համար հարկաւոր է եկեղեցի, որոնք բոլորը, ինչպէս Դուք գիտէք, աւերուած են: Դրանք վերականգնել այժմ հնարաւոր չէ, սակայն ես ցանկանում եմ այդ նպատակի համար յարմարեցնել մի որեւէ ժամանակաւոր շինութիւն որպէս եկեղեցի*»[56]: Տերմէնը խնդրում է օգնել եւ ուղարկել քահանայի, որն իզօրու կը լինի վերականգնել տեղացիների շրջանում հոգեւոր արժէքները[57]:

Տերմէնը յանձին իր երկու ներկայացուցիչների՝ Չանգալեանին եւ Ներսէս Դշխոյեանի խնդրել էր կաթողիկոսին ներկայացնել Վասպուրականում տիրող վիճակը: 1916 Փետրուարի 9ի նամակում ուղուած Գէորգ Ե.ին նրանք վերահաստատում են, որ Վանի շինութիւնների մեծ մասը աւերուած եւ պէտքական չէ բնակութեան համար: Փախստականների վերադարձի համար անհրաժեշտ են միջոցներ շինութիւնների մի մասը վերանորոգելու համար: Ի տարբերութիւն քաղաքի՝ գիւղական բնակավայրերի մեծ մասը սակաւ է վնասուել, սակայն երկրագործների վերադարձի համար անհրաժեշտ են գիւղատնտեսական գործիքներ, սերմեր, եզներ, որոնք հնարաւորութիւն կը տան վերսկսել հողագործական աշխատանքները եւ կ'ապահովեն համապատասխան քանակութեամբ սննդով:

Տերմէնն իր աջակցութիւնն է յայտնում Հայ Առաքելական Եկեղեցուն: Երբ Վան է գալիս Լիմ Անապատի վանահայր Յովհաննէս վարդապետը իր հետ ունենալով Գէորգ Ե.ի յանձնարարականը: Շրջանապետը նրան թոյլատրում է վանքից Այգեստան տեղափոխել ձեռագիր եւ տպագիր գրքերը: Իր հերթին Տերմէնը անձնական նախաձեռնութեամբ հաւաքում է

Քաղաքամէջի եկեղեցիներում եղած այն ձեռագրերը, որոնք չէին հասցրել տեղափոխել 1915 յուլիսեան նահանջի ժամանակ եւ հայութեան համար սրբութիւն հանդիսացող Ս. Վարդանի աջը եւ պատրաստ է ամէնը յանձնելու, որպէսզի տեղափոխեն Էջմիածին[58]:

Տերմէնը խնդրել է յայտնել, որ վերադարձողների համար հարկաւոր է ճանապարհին կազմակերպել սննդակայաններ եւ ժամանակաւոր կացարաններ, որտեղ վասպուրականցիները հնարաւորութիւն կ'ունենան հանգստանալ, ստանալ սնունդ ու ճանապարհը շարունակել:

Շրջանապետի ներկայացուցիչների ներկայացրած նամակից հետեւում է, որ նա գոհ է ոստիկաններից, որոնք «*Արդէն անօրինակելի կերպով օգտակար եղած են իրենց փոքր կազմով, ներգաղթումի պարագային բազմացող ժողովրդեան նոյնպէս ամէն պէտքերուն եւ պահպանութեան հարկ եղած գոհացումը տալու համար անհրաժեշտ է ըստ այնմ աւելի ուժեղացնել եւ մանաւանդ ապահովել գոյութիւն ունեցող այդ կազմը*»[59]:

Տերմէնի խորհրդով Չանգալեանը եւ Դշխոյեանը կրկին վեհափառի ուշադրութիւնը հրաւիրում են բնակչութեան հոգեւոր պահանջքների բաւարարելու անհրաժշտութիւնը: Նրանք ցաւով հաստատում են, որ բնակչութեան մի մասը «*Իսպառ մոռցած է իւր ազնիւ առաքինութիւնները եւ ինչ որ աւելին է՝ իւր Ազգային Ս. Եկեղեցին եւ մայրենի կրօնը: Մենք շա՜տ տխուր պատմութիւններ ունինք ներկայ ժողովուրդի կեանքէն առնուած եւ վստահ ենք, որ այս տխուր դէպքերը եւ ժողովուրդին վիճակը գոյութիւն պիտի չունենար այսպիսի ցաւալի կերպով, եթէ իսկապէս գտնուած ըլլային կարող եւ արժանի հոգեւոր պաշտօնեաներ կռուելու, խրատելու, քարոզելու եւ առաջնորդելու իրենց հօտը դէպի եկեղեցի եւ դէպի այլ գեղեցիկ պարտականութիւններ*»[60]:

Դարեր շարունակ Հայ Առաքելական Եկեղեցին ոչ միայն բաւարարել է վասպուրականցիների հոգեւոր պահանջմունքները, այլեւ հանդիսացել է դաստիարակող եւ համերաշխող մարմին: Եկեղեցու հոգեւոր առաջնորդի ներկայութիւնը կարեւոր էր նաեւ այն պատճառով, որ նիւթական ծանր վիճակում գտնուող հայութիւնը կարիք ունէր հոգեւոր մխիթարանքի: Հաշուի առնելով նաեւ Տերմէնի եւ միւսների խնդրանքը, կաթողիկոս Գէորգ Ե.ը որոշում է Վասպուրական ուղարկել առաջնորդական տեղապահ Եզնիկ վարդապետ Ներկարարեանին: 1916 Փետրուարի 26ին կաթողիկոսական դիւանը հրաման է ուղարկում Երեւանում գտնուող Ներկարարեան վարդապետին՝ ներկայանալ Էջմիածին, որտեղից մեկնելու էր Վան[61]: Սակայն վարդապետի առողջական վիճակը նրան հնարաւորութիւն չի տալիս անմիջապէս մեկնել, ուստի Վասպուրականի թեմը յանձնւում է Ատրպատականի հոգեւոր առաջնորդ Ներսէս Արք. Մելիք-Թանգեանին:

Հարկ է նշել, որ Վանում համեմատաբար տանելի վիճակ էր ստեղծուած վերադարձողների համար, սակայն նոյնը չի կարելի ասել գաւառի մասին: Այսպէս, Անգղում, Ոստանում եւ Արտամետում զգացւում են

սննդային կայանների եւ թէյարանների պակաս, չնայած այն հանգամանքին, որ տեղերում կան համապատասխան շինութիւններ, որտեղ կարելի է կազմակերպել վերը նշուած հաստատութիւնները: Ինքնին հասկանալի է, որ առանց գաւառի[62] կանոնաւոր կեանքի հնարաւոր չէ իրադրութիւնը կայունացնել նաեւ նահանգի կենտրոն Վանում:

Վասպուրականի վերադարձող հաստատութիւնները գլխաւորապէս իրենց գործունէութիւնը ծաւալել էին Վանում, որտեղ կար 1600 բնակիչ, իսկ մերձակայ գիւղերում՝ մօտ 4500 հոգի: Վերադարձողների 70%ը տղամարդիկ էին: Աթանասեանը վկայում է, որ շնորհիւ Տերմէնի եռանդուն գործունէութեան, հնարաւոր է եղել վերջ տալ վարակիչ հիւանդութիւններին: Նա հաստատում է, որ շրջանապետը իր ուշադրութեան տակ է պահում քաղաքի առողջապահական վիճակը, քաղաքն աստիճանաբար մաքրւում է աղտեղութիւններից, կիսաայրուած տների մի մասը վերականգնւում է: Վանում բաւարար չափով կայ պարեն: Գործում են մօտ 10 փոքրիկ խանութներ, 4 ջրաղացներ եւ տասնեակ արհեստանոցներ: Ջոկատն իր հետ տանում է 800 տղամարդկանց, 400 կանանց եւ 400 երեխաների համար ձմեռային շորեր[63]: Աթանասեանը յայտնում է, որ Վանում գտնուող որբերի թիւը հասնում է 70ի: Իր հետ քաղաք են վերադառնում եւս 100 որբեր[64], նաեւ նրանց դպրոցի համար բոլոր պարագաները: Որբանոցի համար հիմնուելու է բուժարան: Նախատեսւում է Վան-Խոյ ճանապարհի վրայ կազմակերպել միքանի սննդակայաններ, որոնք որոշ չափով կը հոգան ծննդավայր վերադարձողների կարիքները: Լիազօրը յայտնում է, որ Վան է գալիս շրջանապետի կինը՝ տիկին Ադելայիդան[65] որպէս գթութեան քոյր հիւանդանցում ծառայելու համար:

Տերմէնը յաճախ էր լինում վերադարձողների շրջանում: Վան եւ մերձակայ գիւղերն էին գալիս վասպուրականցիների նորանոր խմբեր: Նրանց մի մասը ապրում էր առողջապահական-մաքրութեան անտանելի պայմաններում, ուստի պատահական չէ, որ կարճ ժամանակ անց կրկին բռնկւում են վարակիչ հիւանդութիւններ, յատկապէս տիֆը: Շրջագայութիւններից մէկի ժամանակ Տերմէնը վարակւում է տիֆով[66]: Մինչ իր ապաքինումը, նրան ժամանակաւոր փոխարինում է կազակային զօրքի սպայ Սոլոցկիյը[67]: Աթանասեանի վկայութեամբ, կազդուրուելուց յետոյ Տերմէնը «*Նոր եռանդով կպած է երկրի բարեշինութեան գործին*»[68]:

Իրավիճակը յատկապէս ծանր էր Վասպուրականի գիւղերում: Ռուսական իշխանութիւնները քայլեր են կատարում, որպէսզի քրտերի հետ հաստատեն բարեկամական յարաբերութիւններ: Սակայն, ինչպէս նախկինում, այնպէս էլ այժմ, քրտերը ձեւացնում են, թէ հպատակուել են ռուսներին, սակայն շարունակում են իրենց աւարառուական արշաւանքները հայերի վրայ: Նրանցից եւ իրենց բնակավայրերը պաշտպանելու համար գիւղացիները կազմակերպում են ոստիկանական խմբեր: Դա, սակայն, բաւարար չէր: Ռուսներին «հպատակութիւն» յայտնած քրտերը առիթը բաց

չեն թողնում հայ գիւղացիների վրայ յարձակուելու համար: Ոստիկանութեան թուակազմը բաւարար չէր բոլորին պաշտպանելու ու յանցաւորներին պատժելու համար, սակայն անբաւարար էին դրամական հնարաւորութիւնները՝ ոստիկանութիւնը անհրաժեշտ թուի հասցնելու համար:

Տիֆով հիւանդ, սակայն աստիճանաբար ապաքինուող Տերմէնը յայտնում է ՀՎՅի անդամներին, որ վերադարձողներին օրական տրուելու է 15 կոպէկի պետական նպաստ՝ ոչ թէ փողով, այլ պարենով կամ այլապէս[69]:

Հաշուի առնելով ստեղծուած իրավիճակը, Եկարեանը դիմում է Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին, խնդրելով որոշ գումար փոխանցել Վանում գտնուող գաղթականների համար: 1915 Դեկտեմբերի 15ին Եկարեանը տեղեկացնում է, որ 4,000 ռուբլի է փոխանցուել Տերմէնի անունով, որպէսզի այն օգտագործի գաղթականների համար[70]:

Տերմէնի մտահոգութիւններից մէկը որբերի կեցութեան խնդրի լուծումն էր: 1915 Դեկտեմբերի 4ի հեռագրում նա տագնապով յայտնում է, որ որբերից «*Շատերը մերկ են, ուրիշները հասնելուց յետոյ մեռնում են սննդի պակասութիւնից: Յրտերը սկսել են եւ հագուստ չկայ նրանց հագցնելու: Չկան եւ վերմակներ, որ նրանք ծածկուեն: Քաղաքում ոչինչ չկայ: Չկայ բժիշկ, չկայ հիւանդանոց: Որբերը կարիք ունեն մայրական խնամքի: Օգնեցէք*»[71]: Դեկտեմբերի 4ին Վան է շտապում Աթանասեանը համապատասխան օգնութեամբ: Նրա գլխաւորած խումբը, որոնց թում էին Տերմէնի կինն ու երեխաները Դեկտեմբերի 24ին պիտի հասնէին Վան[72]:

Աթանասեանը Դեկտեմբերին գալով Վան, հետեւեալ թղթակցութիւնն է ուղարկում. «*Օտրիադին* (ջոկատին - Ռ.Ս.) *առանձին կենդանութիւն էր տալիս տ[իկին] Տերմէնը իր երեխաներով, կարծես գարնան ծիծեռնակներ լինեն*»[73]: Այս հանգամանքը հոգեբանական ազդեցութիւն է գործում ոչ միայն Վանի, այլեւ ողջ հայութեան շրջանում: Որոշակի վստահութիւն է առաջանում Տերմէնի նկատմամբ, քանի որ նա չի երկիւղում ընտանիքը տեղափոխել Վան: Այստեղից հայ հասարակութիւնը, յատկապէս վանեցիները, կարող էին եզրակացնել, որ իրավիճակը վերահսկելի է, ուստի վերադարձողներին որեւէ վտանգ չի կարող սպառնալ:

1915 Դեկտեմբերին կազմում է Տնտեսական Մարմին (ՏՄ), որի նախագահ է ընտրում Տերմէնը: Մարմնի մնացած անդամները տեղացիներ են: Նահանգապետը ՏՄին տրամադրում է 1000 ռուբլի՝ նախնական ծախսերի համար: Մարմինն առաջին հերթին սկսում է ցուցակագրել քաղաքում եւ գաւառներում բնակուող ու առաւել ծանր վիճակում գտնուողներին: Վիճակագրութեան ընթացքում պարզւում է որ Վանում օգնութեան կարիք ունեն 1317, իսկ գաւառներում մօտ 5500 հոգի[74]:

ՏՄն իզօրու էր կարօտեալներին ապահովել բացառապէս հացով, օրընդմէջ տրում էր ճաշ, միաժամանակ նախատեսւում էր քաղաքում բացել թէյարաններ: Քաղաքների Միութեան Կովկասեան բաժանմունքի նախագահ, Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսեանը Տերմէնին ուղղուած հե-

ռագրում տեղեկացրել է, որ զօրավար Թամամշեանը համաձայնել է 1916ի գարնանը Վանի որբերին տեղափոխել Դիլիջան: Այս խոստումը առաջացնում է վանեցիների դժգոհութիւնը, քանի որ նրանք ցանկանում էին, որ երեխաները մնան Վանում[75]:

Աստիճանաբար կարգաւորւում է նաեւ գիւղական կեանքը, չնայած ահռելի դժուարութիւններին ու փորձութիւններին, գիւղերում քայլ առ քայլ ձեռնամուխ են լինում առօրեայ աշխատանքներին, իսկ հնարաւորութեան դէպքում վերաբացում են դպրոցները, ինչպէս Եկմալ գիւղում: Այստեղ բնակւում էին 89 հոգի եւ գործում էր 30 աշակերտներից կազմուած դպրոց: Ուսուցիչն էր վանեցի Արշաւիր Աթաբէկեանը[76]:

1916 Յունուարին գաւառապետի հրամանով կազմակերպւում է Պարենաւորման Մարմին (ՊՄ), որը պէտք է հաց բաժանէր հայ եւ ասորի գաղթականներին: Այս կարեւոր եւ պատասխանատու գործը յանձն է առնում Վանի ոստիկանութեան հրամանատարի տեղակալ Չանգալեանն իր չորս ենթակաների հետ: Նրանք հրաժարւում են որեւէ վարձատրութիւնից, սակայն, երբ յաջողութեամբ կատարում են իրենց պարտականութիւնները ՊՄն որոշում է իւրաքանչիւրին պարգեւատրել 15ական ռուբլով[77]:

Նոյն ամսին Քաղաքների Միութեան Կովկասեան Բաժանմունքը հրամայում է Աթանասեանին «*Մնալ Վանում եւ նպաստել նահանգապետ Տերմէնին՝ երկրի վերաշինութեան գործին: Այդ մի ուրախալի լուր էր վանեցիների համար, քանի որ նրանք մեծապէս կարիք ունեն Պ. Աթանասեանի նման փորձուած եւ կարող գիւղատնտեսի*»[78]:

1916 Յունուարի 5ի նամակում Տերմէնը խնդրում է հայ հասարակութեանը՝ օգնել աշխատակիցներով, քանի որ իր վարչակազմը փոքրաթիւ է եւ իզօրու չէ իրականացնել նախատեսուած աշխատանքները: Իր հերթին նա պարտք է համարում ընդգծել, որ զգալիօրէն իրեն օժանդակում են երկրապահները, որոնք «*Փոխարինում են պակասորդ վարչութեան, նրանց խելացի եւ նպատակայարմար աշխատութիւնը ինձ տալիս է լիակատար յոյս՝ նպաստաւոր հետեւանքի հասնելու*»[79]:

Յունուարի 6ի հեռագրում՝ ուղղուած Ս. Յարութիւնեանին, Տերմէնը յայտնում, է, որ իր գլխաւորած յանձնաժողովը քննել է Թիմար գաւառի անյետաձգելի կարիքների մասին Աթանասեանի զեկուցումը եւ ներկայացրած նախահաշիւը: Գաւառում բնակւում են շուրջ 4,000 գիւղացիներ, իսկ վաղ գարնանը նախատեսւում է մինչեւ 15,000 շինականների վերադարձ: Նրանց դաշտային աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է ապահովել նուազագոյնը սերմացուով, բեռնակիր եւ կաթնատու կենդանիներով, գիւղատնտեսական գործիքներով, որոնց ընդհանուր արժէքը կազմում է 250,000 ռուբլի[80]:

Տերմէնը զգալի տեղ էր յատկացնում Վանի ոստիկանութեան. նա շահագրգռուած էր, որ հայ երկրապահները շարունակեն իրենց ծառայութիւնը: Սակայն, այն որ ոստիկանութեան կեցութեան խնդիրները եւ աշ-

խատավարձն ամբողջութեամբ ընկած էին հայերի վրայ՝ խիստ անհանգստացնում էր շրջանապետին, ուստի նրա համար ուրախալի էր, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե.ից Տերմէնին փոխանցուելու է 4,000 ռուբլի՝ ոստիկանութեան համար ուղարկուած[81]:

Շրջանապետն իր պարտքն է համարում հայ հասարակութեանը տեղեկացնել, որ տենդագին աշխատանքներ է կատարում քրտական գերութեան մէջ գտնուող ոչ միայ հայ որբերին, այլեւ ընդհանրապէս հայերի ազատելու համար: Ռուսական իշխանութիւններին հպատակութիւն յայտնած քրտերին յայտարարել է, որ եթէ նրանք կամաւոր իրեն յանձնեն հայ որբերին, ապա իւրաքանչիւրի համար կը վճարուի 10 ռուբլի[82]: Տերմէնը սոյն հրամանն իրագործելու համար տուել էր մէկ ամիս, որից յետոյ սպառնում էր քրտական գիւղերում հայ գտնելու դէպքում իւրաքանչիւր գիւղ տուգանել «*1000 ռուբլով, ամէն մի հայի կամ հայուհու համար*»[83]:

1916 Յունուարին Ազգային Բիւրօն Բուլղարացի Գրիգորի ղեկավարութեամբ 12 հոգուց բաղկացած հեծելախումբ է ուղարկում Վան: Նրանք հիմնականում մասնակցում են ռուսական զօրքերի հետախուզական գործողութիւններին[84]:

Փետրուարի 28ի հաղորդագրութիւնում Աթանասեանը յայտնում է, որ Տերմէնի մօտ կայացած խորհրդակցութեան ընթացքում որոշուել է առաջնահերթ օգնութիւն ցուցաբերել Ներքին Թիմարի 36 գիւղերին, որտեղ հիմնականում կենտրոնանալու են վերադարձող վասպուրականցիները: Իր 1916 Մարտի 11ի զեկուցման մէջ, նա դարձեալ գովաբանում է շրջանապետին իր ազնիւ կեցուածքի համար. նա «*Բարի դիտաւորութիւններով օժտուած անձնաւորութիւն է: Թէ ինքը եւ թէ իր տիկինը ծնողական գուրգուրանքով վերաբերում [են] դէպի տեղական բնակչութիւնը*»[85]:

Տերմէնը նկատել էր հայ հասարութեան կարեւոր «ցաւերից» մէկը՝ կուսակցական երկպառակութիւնները, որոնք հնարաւորութիւն չէին տալիս ազգը միաւորել եւ հասնել իր առջեւ դրուած նպատակին: Նա ցանկութիւն է յայտնում, որ. «*Հայ հասարակութիւնը, կամ, աւելի ճիշտ, հայ ժողովուրդը մոռանայ բոլոր կուսակցական հաշիւները, հզօր կերպով միանայ, ընդհանուր, անկուսակցական կուլտուրա-ստեղծագործական աշխատանքի համար, որի հետեւանքները շատ շուտով կ'արտայայտուեն, վերականգնելու բարեկեցութիւնը Վանի շրջանում*»[86]:

1916 Փետրուարին բարենպաստ իրադրութիւն է ստեղծում Վան-Վասպուրականի հայութեան համար. Կովկասեան բանակը գրաւում է Կարինը[87], ապա Մուշը: Ռազմաճակատի գիծը բաւականին հեռանում է Վանից, այսինքն ստեղծուել էր քիչ թէ շատ ապահով իրավիճակ բնակչութեան վերադարձի եւ տնտեսութեան վերականգնման համար:

Փետրուարի սկզբներին Տերմէնի յանձնարարութեամբ ոստիկանութիւնը ձեռնարկում է Վան նահանգի բնակչութեան մարդահամար: Միաժա-

մանակ ՊՄՆ վերափոխում է Դրամաբաշխ Յանձնաժողովի[88], որը սահմանում է դրամաբաշխման նոր համակարգ:

Ինչպէս երեւում է Աթանասեանի զեկուցագրից՝ Վանը հմայել էր Տերմէնին: Նա հաստատ համոզուած էր, որ Վանն ապագայում դառնալու էր երկրորդ Շուէյցարիա[89]: Եկարեանը վկայում է, որ Տերմէնը մտադիր էր ոչ միայն օժանդակել գիւղացիութեանը՝ երկրագործական գործիքներով, այլեւ տնկել ծառեր ու զարգացնել ձկնաբուծութիւնը[90]: Շրջանապետին հիացրել էին Վանի աննման կատուները եւ նա հայերին խորհուրդ էր տալիս ապագայում զբաղուել կատուների բուծմամբ եւ վաճառքով:

Մանրակրկիտ ուսումնասիրելով քաղաքի եւ նահանգի վիճակը Տերմէնը եզրակացնում է, որ վերադարձած մօտ 30,000 հայութեան վիճակը բարելաւելու համար անհրաժեշտ է 30,000 ռուբլու տարեկան բիւջէ: Բացի այդ՝ պէտք է հիմնել յատուկ վարչական մարմին, որի մէջ պէտք է մտնեն դատական, ոստիկանական եւ նոր կազմաւորուող մարմինների անդամները: Նա գտնում է, որ ներկայ պայմաններում դատարանի անդամների թիւն անբաւարար է եւ նրա կազմը պէտք է աւելացուի: Միաժամանակ ոստիկանութեան եւ միլիցիայի[91] գործառոյթները պէտք է յստակեցուեն: Շրջանապետի համոզմամբ նրա թուաքանակը անհրաժեշտ է հասցնել 300ի, որպէսզի կարողանայ պաշտպանել բնակչութեան անվտանգութիւնը: Ինչ վերաբերում է ոստիկանութեանը, ապա նրա անձնակազմի թուաքականը պէտք է լինի առնուազն 200 հոգի[92]:

Վանում եւ նահանգում աստիճանաբար կեանքը մտնում է խաղաղ հունի մեջ: Սակայն, 1916 Յուլիսի 25ից սկսած անպաշտօն տարածուող լուրերը՝ ռուսական զօրքի հնարաւոր նահանջի[93] մասին, ապակողմնորոշում են բնակչութեանը եւ զանազան աշխատանքներ իրականացնող հայկական, ամերիկեան եւ անգլիական կազմակերպութիւններին: Նախորդ տարուայ «նահանջի» պատմութիւնը յուշում էր, որ այս անգամ էլ դա հերթական խաղ է: Ինչպէս նախկինում, այնպէս էլ այս անգամ էլ հնարաւոր էր նուազագոյնը՝ կազմակերպել քաղաքի պաշտպանութիւնը: Խուճապն ուժեղացնում են նահանգի տարբեր բնակավայրերում տեղակայուած զինուորական պարետները, որոնք «*Առանց իրական թշնամիի գոյութիւնն տեսնելու, կը թողուն Նորդուզի, Շատախի եւ Գաւաշի դիրքերը*»[94]:

Հայկական կողմն առաջարկում է Տերմէնին՝ միլիցիային յանձնել քաղաքի հասարակական կարգի պահպանումը, սակայն շրջանապետն ունենալով զօրավար Վորոնովի հրամանը չի համաձայնում: Շրջանապետը կարողանում է զօրավարից «պոկել» 126 միաւոր «Բերդան» մակնիշի հրացաններ եւ յանձնում է Չանգալեանի գլխաւորած միլիցիային[95]:

Իր հերթին Վորոնովը հրամայում է հայկական միլիցիային՝ մօտ 160 հոգի[96], անմիջապէս հեռանալ քաղաքից եւ Յուլիսի 29ին ստորաբաժանումը ստիպուած է լինում ենթարկուել հրամանին[97]: Սկսում է նաեւ Վանի բնակչութեան գաղթը: Նման պայմաններում Տերմէնին յաջողւում է հրա-

մանատարութիւնից թոյլտուութիւն ստանալ եւ միլիցիան վերադարձնել քաղաք, քանի որ նա համոզուած էր, որ որեւէ վտանգ չկայ, սակայն Վորոնովը անդրդուելի էր, ուստի նրա հրամանը կատարուեց: Քաղաքում մնում է Տերմէնը եւ նրա թիկնապահ հեծելախումբը: Օգտուելով խառնաշփոթից, քաղաքում տեղակայուած զօրամասերի զինծառայողները, գնդապետ Աղալարովի գլխաւորութեամբ սկսում են հայերի ու զանազան ընկերութիւնների գոյքի եւ ունեցուածքի կողոպուտը[98]:

Օգոստոսի 1ին, շրջանապետի հրամանով, ոստիկանութիւնը պահանջում է բնակիչներից ստանալ ինքնութիւնը հաստատող վկայականներ: Դա նպատակ ունէր հաշուառել Վանում գտնուող բնակչութիւնը, որպէսզի հնարաւոր նահանջի դէպքում ապահովուէր նրանց անվտանգութիւնը:

Օգոստոսի 9ին միլիցիան կարողանում է ետ մղել Թիմարի գիւղեր թալանի եկած քրտական յելուզակներին:

1916 Օգոստոսի 24ի նամակում՝ ուղուած կաթողիկոսին, մի խումբ վանեցիներ, որոնց թւում Հայկ Կոսոյեանը, Բարունակ Կապուտիկեանը եւ ուրիշներ յայտնում են, որ Վորոնովը դիտաւորեալ էր Տերմէնին եւ ժողովրդին թողել անորոշութեան մէջ եւ «*Ոչինչ չյայտնել, թէ մեր սահմաններուն վրայ թշնամին գոյութիւն ունի, թէ՞ ոչ*»[99]:

Այնուամենայնիւ, բնակչութիւնը հարկադրուած էր թողնել հայրենի վայրերը եւ տեղափոխուել Թիմար, որտեղ տեղակայւում է նաեւ միլիցիան: Վերջինիս ներկայութիւնը վստահութիւն էր ներշնչում վասպուրականցիներին, որ թշնամու յարձակման դէպքում իրենց անձը պաշտպանուած կը լինի: Միքանի օր անց Տերմէնը տեղեկացրեց, որ այգետէրերը կարող են վերադառնալ, աստիճանաբար գաւառ. հիմնականում Թիմար են գալիս միւս վասպուրականցիները[100]:

Յուլիսեան նահանջը ծանր հարուած է հասցնում Վասպուրականի հայութեանը: Քաղաք եւ նահանգ վերադարձած կազմակերպութիւնները այլեւս չէին գործում նոյն թափով: Նրանք հարկադրուած էին գործել հիմնականում տեղական ռուսական իշխանութիւնների ոչ-բարեկամական պայմաններում: Նահանգապետ Վորոնովը հնարաւորութեան դէպքում արգելքներ էր յարուցում հայկական կազմակերպութիւնների լիարժէք գործունէութեան համար: Այնուամենայնիւ, կազմակերպութիւնները շարունակում են իրականացնել նախատեսուած աշխատանքները:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Մեզ յայտնի չէ, թէ ինչն էր Տերմէնի Վասպուրականից հեռանալու պատճառը կամ պատճառները: *Հորիզոն*ի հաղորդմամբ, Տերմէնը Վանից Կովկաս է մեկնել Հոկտեմբերի 5ին: Թղթակիցը հարկ է համարում աւելացնել. «*Սա մի տարի պաշտօնավարեց եւ միակ պաշտօնեան եղաւ, որ վերջին նահանջին քաղաքէն դուրս չելաւ երբեք...*»[101]:

Այնուամենայնիւ, Տերմէնը այն հազուագիւտ ոստիկան պաշտօնեաներից էր, որն իր սրտի մօտ ընդունեց հայ ժողովրդի ողբերգութիւնը, հասկացաւ ու փորձեց խորանալ նրա կարիքների ու խնդիրների մէջ: Նա իր հնարաւոր ուժերը եւ միջոցները գործադրեց, որպէսզի օգտակար լինի հայ ժողովրդին, նպաստի Վասպուրականի վերաշինութեանը: Ինքնին հասկանալի է, որ ցարական ինքնակալութեանը նման պաշտօնեաներն անհրաժեշտ չէին, ուստի վարչակազմը իր հիմնական խնդիրներից մէկը դարձրեց նրանից ազատուելը Տերմէնը ստիպուած էր հեռանալ: Սակայն վասպուրականցիների յիշողութեան մէջ մնաց որպէս բարի եւ անձնուէր անձնաւորութիւն: Նման վերաբերմունքի գլխաւոր պատճառներից էր, այն որ չնայած ստեղծուած դժնդակ իրավիճակին, ինքնակալութեան համար ակնյայտ էր, որ արեւմտահայերը իզօրու են պետականութեան վերականգնման համար որոշակի յատկանիշների համար հիմքեր ստեղծել, որոնց հետ, իհարկէ, չէր կարող հաշտուել ծայրայեղ միապետական հայեացքներ ունեցող ռուսական վարչակազմը: Ուստի, վերջինիս համար անյարիր էին Տերմէնի նման պաշտօնեաները, որոնք իրենց գործողութիւններով նպաստում էին Վասպուրականում հայկական հնարաւոր ինքնավարութեան համար հիմքեր ստեղծելուն նպաստելը: Տերմէնի նման պաշտօնեաները «վտանգաւոր» էին ինքնակալութեան:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ա. Մելքոնեան, «Ուշագրաւ Աշխատութիւն. Ֆիոդոր Ելիսէեւ. «Կազակները Կովկասեան ճակատում 1914-1914», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2004, № 1, էջ 178:

[2] Մեզ յայտնի միակ գործիչը Հմայեակ Մանուկեանն է, որը Տերմէնին քննադատում է հակադաշնակցական կեցուածքի համար (Հմայեակ Մանուկեան, «Դէպքերը Վասպուրականում», *Վէմ*, 1937, Փարիզ, թիւ 1, Յունուար-Մարտ, էջ, 59): Նա, սակայն, հարկադրուած է ընդունել, որ Տերմէնի օրօք Վան-Վասպուրականում գործել են վեց ընկերութիւններ. «*սոյն ընկերութիւնները մեծ եռանդով եւ մրցակցութեամբ ձեռնարկած էին Վասպուրականի վերաշինութեան գործին եւ ժողովուրդը հետզհետէ մեծ թափով կը լեցուէր Վասպուրական՝ վերադառնալով Կովկասէն ու Պարսկաստանէն...*»): Անհրաժեշտ է ընդգծել, որ նշուած հայկական, ամերիկեան ու ռուսական կազմակերպութիւնները ամենաարդիւնաւէտ գործել են Տերմէնի շրջանապետութեան ժամանակ:

[3] Զօրավար Յովհաննէս Հախվերդեանը Վորոնովի մասին հետեւեալ կարծիքն է հաղորդում. «*Նրա անունը համարժէք էր վախկոտութեանը: Վորոնովն իրեն խայտառակել էր 1904-1905ի ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ: Պատերազմի մասնակիցների համոզմամբ Պրիմորսկեան դրագունեան գունդը պէտք է ղեկավարէր ոչ թէ Վորոնովը, այլ նրա կինը: Վերջինս սանիտարական թոռցիկ ջոկատի պետն էր եւ իր ենթակաների հետ յաճախ գտնւում էր առաջաւոր դիրքերում*» (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 51 շրջ.):

[4] Տերմէնների տոհմից էր ռուս եւ խորհրդային գիտարար Լեւ Տերմէնը (1896-1993), որը ստեղծել է նուագարաններ, որոնցից յայտնի է՝ Տերմէնվոկսը (1920): Սա աշխարհում առաջին էլեկտրոնային նուագարանն էր: Այն նուագում էին առանց նուագարանին դիպչելու: Անձնապէս ծանօթ է եղել Վլադիմիր Լենինի հետ, սովորեցրել է նուագել Տերմէնվոկսի վրայ: Խորհրդային տարիներին ձերբակալուել է եւ աշխատել (1940-48) ԽՍՀՄ պետական անվտանգութեան մարմինների հսկողութեան տակ գտնուող № 29 Կենտրոնական Կոնստրուկտորական Բիւրոյում: Այնտեղ Լ. Տերմէնի օգնականն է եղել յետագայում խորհրդային առաջին արբանեակի հեղինակ Սերգէյ Կորոլիովը: Լ. Տերմէնը նախագծել է առանց կողմնակի սնուցման գաղտնալսող սարք՝ «Բուրան», որի համար 1947ին արժանացել է Ստալինեան մրցանակի: Նման մի սարք տեղադրուել էր ԽՍՀՄում ԱՄՆի դեսպանի առանձնասենեակում: Առ այսօր Լ. Տերմէնի մի շարք յայտնագործութիւններ շարունակում են գաղտնի մնալ:
Տերմէնի միջնեկ եղբայրը Իոսիֆը (1860-1910ից յետոյ) մասնագիտութեամբ նկարիչ էր: Կրտսեր եղբայրը՝ Ռիչարդը (1870-1937) ռուսական բանակի զօրավար, արեւելագէտ-հետախոյզ, եղել է Վանի ռուսական փոխհիւպատոսը (1905-8), մասնակցել է Ա. Համաշխարհային Պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատի մարտական գործողութիւններին, իսկ երբ կազմուել է «Պատերազմի Իրաւունքով Թուրքիայից Գրաւուած Մարզերի Ընդհանուր-Նահանգապետութիւն»՝ զբաղեցրել է նահանգապետութեան կառավարման շտաբի պետի պաշտօնը (1916-7): Ռ. Ա. Քինյ. Բէկգուլեանցը վկայում է, որ Սոուջբուլաղում Ռ. Տերմէնը կոտորել է մօտ 5,000 քրտերի (Ռ. Օ. Սահակեան, «Ռուբէն Աւագ Քահանայ Բէկգուլեանցի Նամակները Արեւմտեան Հայաստանում Ռուսական Իշխանութիւնների Քաղաքականութեան Մասին», *ՀՀ ԳԱԱ Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2009, № 3, էջ 299):

[5] Անդիջանը բաժանուած էր 9 գաւառակի, բնակչութեան թիւը կազմում էր 50,000 (А. И. Термен, *Воспоминания Администратора. Опыт Исследования Принципов Управления Инородцев. На Правах Рукописи* [Վարչակառավարչի յուշերը: Այլազգիների ղեկավարման փորձի հետազօտութիւն: Ձեռագրի իրաւունքով] Պետրոգրադ, 1914, էջ 4), Պետրոգրադ, 1914, էջ 4:

[6] Փոքր շրջանի ոստիկանապետ:

[7] Ա. Տերմէնի կինն էր Անտուանետա Ֆիոդորովնան, որը պատերազմի սկիզբը աւարտել էր գթութեան քոյրերի դասընթացներ եւ ծառայում էր Գատչինայի հիւանդանոցում: Ամուսիններն ունեցել են երեք երեխայ՝ Էթէլ, Ժերմէն եւ Լիւսինա:

[8] Որպէս օրինակ Տերմէնը վկայակոչում է հետեւեալ դէպքը. Մուկդէնում ականատես է լինում, թէ ինչպէս չինացի ոստիկանն օգնում է ծերունուն անցնել դիմացի մայթը: Տերմէնը հրամայում է խրախուսել ոստիկանի արարքը եւ իր կողմից պարգեւատրում է մէկ ռուբլով: Նա պահանջում է ընդգծել, որ ոստիկանը ճիշտ է վարուել եւ ցոյց է տուել իր յարգանքը աւագների նկատմամբ, (Термен, էջ 2):

[9] Իշանը մահմեդական հոգեւորական է, որը համարում է միջնորդ աստծու եւ ժողովրդի միջեւ: Նա հանդիսանում էր «իսմաիլիտ» համայնքի ղեկավար եւ դաստիարակ:

[10] Термен, էջ 4: Միջին Ասիայում խորհրդային իշխանութիւն հաստատուելուց յետոյ արտասահմանում յայտնուած թուրքեստանցի վտարանդի Մուստաֆա Չո-

կաեւը հետեւեալ կերպ է ներկայացրել ռուսական իշխանութիւնների քաղաքականութիւնը Միջին Ասիայում. *«Եթէ եւրոպական գաղութարարների առջեւից քայլում էին միսիոնէրները եւ վաճառականները՝ առաջինները փնտռում էին «հոգիներ լուսաւորելու» համար, երկրորդները՝ հայրենական արտադրութեան ապրանքների համար վաճառահանման շուկայ, ապա ռուսաստանեան «կուլտուրտրեգերների»* (գերմ.՝ մշակոյթ կրող - Ռ.Ս.) *առջեւում քայլում էին ռուս գիւղացիները, որոնք ռուսական պատմութեան եւ ռուսական կառավարութեան կողմից վերածուել էին «օտար հողերի որսորդների»*, (Т. Котюкова, *Восстание 1916 г. в Туркестане: Ошибка Власти Или Историческая Закономерность? Обозреватель-Observer* [Տ. Կոտյուկովա, 1916ի ապստամբութիւնը Թուրքեստանում: Իշխանութիւնների սխալը, թէ՞ պատմական օրինաչափութիւն], Մոսկուա, 2011, № 8, էջ 100): Ուշագրաւ է, որ 1916ին Թուրքեստանի ընդհանուր-նահանգապետութիւնում բռնկուած ապստամբութիւնից յետոյ Կովկասի իշխանութիւնները չհամարձակուեցին տեղի մահմեդականներին անմիջապէս ներգրաւել թիկունքային աշխատանքներին: Կայսերական հրովարտակով 19-43 տարիքի մահմեդականները կանչւում են թիկունքային աշխատանքների: Նրանց համար ստեղծուել էին լաւագոյն պայմաններ՝ *«Բանտրների համար աշխատանքի տեղերում կը ստեղծուեն առանձին յարմարութիւններ, նրանց կրօնական ծիսակատարութեան համար...: Բանտրների խմբերի համար կը նշանակուեն մոլլաներ, կրօնական արարողութիւնների համար»*: Սահմանուել էր աշխատավարձ՝ որակաւորում չպահանջող աշխատանքի համար օրական 1 ռ. 20 կոպ., իսկ արհեստաւորների համար՝ 2 ռ. 50 կոպ. («Կովկասեան Մուսուլմանների Ձօրակոչը», *Հորիզոն*, 1916, № 229, 14 Հոկտեմբեր): Նշենք, որ Կիրգիզիայի նախագահ Ալմազբէկ Աթամբաեւի 2017 Հոկտեմբերի 26ի հրամանագրով Նոյեմբերի 7ը եւ 8ը յայտարարուեցին 1916ին Թուրքեստանում բռնկուած ապստամբութեան յիշատակի օր, հոկտեմբերեան յեղափոխութեան տօնը վերանուանելով «Պատմութեան եւ Նախնիների Յիշատակի Օր» (https://lenta.ru/news/2017/10/26/atambaev/):

[11] Նրա մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ս. Թ. Իշխանեան, *Հայ Դեմոկրատական Մամուլի Պատմութիւնից («Աշխատանք» Հանդէսի Մասին)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1962. նաեւ՝ Լ. Ա. Ալոյեան, «Աթանասեան Խմբագիր-Հրապարակախօսը», *ՀՀ ԳԱԱ Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2001, N 2, էջ 150-155. նաեւ՝ Ռ. Սահակեան, «Աշոտ Աթանասեանի Գործունէութիւնը Արեւմտեան Հայաստանի Վերաշինութեան Գործում», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2007, № 1-2, էջ 34-54:

[12] «Մեր Հանդիպումը Վանի Նահանգապետ Ա. Տերմէնի Հետ», *Մշակ*, Թիֆլիս, 1915, № 236, 25 Հոկտեմբեր:

[13] Նոյն:

[14] Նոյն:

[15] Հոկտեմբերի 9ին իշխանութիւնները տեղեկացնում են, որ Իգդիր-Վան ճանապարհը անապահով է երթեւեկութեան համար, ուստի Վասպուրական վերադարձողները պէտք է օգտուեն Ջուլֆա-Վան ճանապարհից, որն ի տարբերութիւն նախորդի՝ աւելի երկար է («Վանի Ճանապարհը Փակուած», *Արեւ*, Բագու, 1915, № 171, 13 Հոկտեմբեր):

[16] «Մեր Հանդիպումը»:

[17] Նոյն:

[18] ՀԱԱ, ֆ. 1167, g. 1, գ. 320, թ. 138:

[19] *Յուշեր Արմենակ Եկարեանի*, խմբ.՝ Լ. Աճեմեան, Գահիրէ, Հրատ. Ազգ. Հիմնադրամի, 1947, էջ 263:

[20] Р. Саакян, "Армянское Добровольческое Движение На Русско-Турецком Фронте (1914-1916 гг.)" (Ռ. Սահակեան, Հայկական կամաւորական շարժումը ռուս-թուրքական ռազմաճակատում (1914-1916 թթ.)), *Պատմաբանասիրական Հանդէս*, 2017, № 1, էջ 19:

[21] «Վանի Երկրապահ Գունդը», *Վան-Տոսպ*, 1916, 31 Յունուարի, № 10, էջ 3:

[22] «Դէպի Վան (Ճանապարհորդական Տպաւորութիւններ)», *Մշակ*, Թիֆլիս, 1915, № 245, 5 Նոյեմբեր:

[23] «Լուրեր Վանի Մասին», *Մշակ*, 1915, № 243, 3 Նոյեմբեր:

[24] Գրեթէ ողջ Արեւմտեան Հայաստանն էր դարձել տարբեր բնոյթի թալանիչների համար «դրախտավայր»: Զօրավար Թովմաս Նազարբէկեանն իր յուշերում յիշատակում է Լաբինսկեան կազակային գնդի սպայ Ն. Բաբիեւի կողմից ուղարկուող գողօնը՝ 10 բեռնատար ձիերով, որոնց թում կար նաեւ մէկ թրքուհի (ՀԱԱ, ֆ. 45, g. 1, գ. 11, թ.11):

[25] «Զզուելի Կողոպտիչներ», *Մշակ*, 1915, № 238, 28 Հոկտեմբեր: Կովկասեան բանակի աւագ սպայ Կոնստանտին Սմիռնովն իր նամակներից մէկում վկայում է, որ 1915 Հոկտեմբերի 18ին Բայազէտի մօտ բռնել էին 36 ուղտերից բաղկացած կարաւան, որը տեղափոխում էր Վանից գողացուած ապրանք: Իր հրամանով գողօնն ուղղում է Իգդիր, որտեղ նրա ճակատագիրը պէտք է որոշէր տեղի հայկական կոմիտէն եւ ոստիկանութիւնը եւ որպէսզի կարաւանը «չշեղուի» ճանապարհից եւ գնայ Կարս՝ որպէս ուղեկցողներ նշանակում է երկու կազակների: Միաժամանակ անց կազակները վերադառնում են եւ յայտնում, որ 25 հայեր, անգլիական բանակի սպայի գլխաւորութեամբ բռնութեամբ կարաւանը վերադարձրել են Վան: Սմիռնովին ուղղուած անգլերէն երկտողում սպան յայտնել է, որ կարաւանը գրաւուել է Վանի գաւառապետ Տերմէնի հրամանով: Սմիռնովը գրում է. «*Այդ ամէնից* (կազակների պատմածից եւ անգլերէն երկտողից - Ռ.Ս.) *ես հասկացայ, որ դա ամերիկահայերի աւազակախումբն էր, որոնց այնպիսի հիացմունքով հաւաքել էր այդ ապուշ Տերմէնը: Ես սարսափելի զայրացայ եւ հեռագրեցի... խնդրելով ձերբակալել ինքնակոչ սպային եւ նրան յանձնել Տերմէնին*» (Нугзар К. Тер-Оганов, "Письма Офицера-Востоковеда К.Н. Смирнова с Кавказского фронта как Источник для Изучения Военно-политической Ситуации в Турции и Иране в 1914-1917 гг," *Voennyi Sbornik, Հտր. 6*, թիւ 4, էջ 230-1 [Նուգզար Տէր-Օգանով, Կովկասեան ռազմաճակատից արեւելագէտ-սպայ Կ. Ն. Սմիռնովի գրած նամակները որպէս աղբիւր 1914-1917ի Թուրքիայում եւ Պարսկաստանում ռազմաքաղաքական իրադրութիւնը ուսումնասիրելու համար, Ռազմական հաւաքածու]) http://ejournal6.com/journals_n/1418320890.pdf : Այս տողերի վերաբերեալ արուած ծանօթագրութիւնում, Սմիռնովը հետեւեալն է գրել Տերմէնի մասին, հաւանաբար զգուշանալով կրտսեր եղբօրից՝ Ռիչարդից, որը զօրավար էր. «*Դէ ապուշ, ոչ ապուշ, սակայն շատ տարօրինակ եւ ոչ շատ համակրելի է ինչպէս Ռիչարդ Իոսիֆովիչը: Պատերազմի վերջում մահացաւ*» (նոյն, էջ 235): Սպայի նամակները հրապարակած պատմաբան Տէր-Օգանովը քննելով

բովանդակութիւնները, եզրակացրել է որ նա չէր թաքցնում իր անբարեացակամութիւնը՝ մի շարք ազգային փոքրամասնութիւնների հանդէպ՝ «*Նրա* (Սմիռնովի - Ռ.Ս.) *նամակներն ամբողջութեամբ ներծծուած են օտարների նկատմամբ ատելութեամբ, որը յստակ երեւում է պարսիկների ... նաեւ հայերի նկատմամբ*» (նոյն, էջ 210): Նշենք, որ 1917ի Փետրուարեան Յեղափոխութիւնից Վանի նահանգային կոմիսար է նշանակւում Կոստանդին Համբարձումեանը (Կոստիա, Վասպուրականի Կոստի, Ուխտաւոր, 1882-1918) (Մանուկեան, *Դէպքերը*, էջ 61):

[26] «Դէպի Վան (Ճանապարհորդական Տպաւորութիւններ)»:

[27] ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 171, թ. 3:

[28] Իշխան Բ. Շախովսկու հովանաւորութեամբ կազմւում են քրտական եւ ասորական ստորաբաժանումներ, իսկ «*Հայերից հաւաքում էին եղած զէնքերը, իսկ աւելացնում էին քրտերի զէնքի պակասութիւնը*» (ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 171, թ. 2):

[29] Զօրավար Նազարբէկեանը վկայում է, որ կովկասեան բանակի զօրքերին ընթերցւում է փոխարքայ, մեծ իշխան Նիկոլայ Ռոմանովի (Նիկոլայ կրտսեր) հրամանը՝ քրտերին իրենց կողմը գրաւելու անհրաժեշտութեան մասին: Զօրավարը գտնում է, որ հրամանը սխալ է: Նրա համոզմամբ գիտակցական մակարդակն այնքան ցածր է, որ քրտերին հնարաւոր չէ ոչ միայն իրենց կողմը գրաւել, այլեւ նպաստել բարեկամական յարաբերութիւնների հաստատմանը հայերի հետ (ՀԱԱ, ֆ. 45, g. 1, գ. 7, թ. 22 շրջ.-23):

[30] Բուրկովսկի Վլադիմիր (1863-1941), ռուսական բանակի զօրավար, 1917 Փետրուարի 2-1917 Մարտի 4՝ Վանի նահանգապետ:

[31] ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 171, թ. 10:

[32] Աւելի մանրամասն տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 1168, g. 1, գ. 319, թ. 192-208:

[33] «Վերաշինութեան Գործը Վանում», *Մշակ*, 1915, № 272, 9 Դեկտեմբեր:

[34] «Շաբաթական Լուրեր», *Վան-Տոսպ*, Թիֆլիս, 1916, № 36, 31 Յուլիսի, էջ 16: Ինչպէս նշում է Դարբինեանը. «*Քաղաքապետի պաշտօնին համար յարմարագոյն անձն էր Ա. Թէրզիպաշեան...Վանի մէջ Թէրզիպաշեան մեծ դիրք ունէր եւ կրնար անհատապէս դեր խաղալ տեղական ազգային գործերուն մէջ*» (Դարբինեան, էջ 343-4):

[35] «Վարագը Աւերակների Միջից», *Վան-Տոսպ*, 1916, № 36, 31 Յուլիս, էջ 12:

[36] «Վերաշինութեան Գործը Վանում»:

[37] «Վանի Երկրապահ Գունդը», *Վան-Տոսպ*, 1916, № 10, 31 Յունուար, էջ 3:

[38] Նոյն:

[39] «Փախստականների Մասին», *Մշակ*, 1915, № 251, 12 Նոյեմբեր:

[40] Յանձնաժողովի կազմը հետեւեալն էր՝ նախագահ Դաւիթ խան Աւան-Եուզբաշեան, փոխնախահագներ՝ Համբարձում Առաքելեան, բժիշկ Բագրատ Նաւասարդեան, անդամ-գանձապահ Ալեքսանդր Մելիք-Ազարեան, անդամներ՝ Միքայէլ Արամեանց, Հ. Պսարեան, Միքայէլ Աթաբէկեան, Խաչատուր Խաչատրեանց, Ստեփան Սուլխանեանց, Աւետիք Եզեկեան, Միքայէլ Մինասեան, քարտուղար՝ Ստեփան Մալխասեանց:

[41] «Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի Շրջաբերականը», *Մշակ*, 1915, № 255, 17 Նոյեմբեր:

[42] Նոյն:

[43] Արմենակ Եկարեան (1870-1925), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան անդամ: 1915 Ապրիլ-Մայիս ամիսներին Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանութեան ռազմական ղեկավար, նոյն թուականի Մայիս-Յուլիսին կազմակերպուած Վանի նահանգապետութեան գաւառական ոստիկանութեան տեսուչ՝ փաստացի գաւառական ոստիկանութեան պետ: Աւելի մանրամասն տե՛ս՝ Հայաստանի Ազգային Արխիւ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 127-30. նաեւ՝ Ռ. Սահակեան, *Հայկական Ոստիկանութեան Կազմակերպումն Ու Գործունէութիւնը Վանի Նահանգապետութեան Շրջանում (1915 թ. Մայիսի 8-Յուլիսի 17)*, Երեւան, Պատմութեան Ինստիտուտ, 2008, էջ 44. նաեւ՝ Ռ. Սահակեան, «Ոստիկանութեան Ծառայութեան Կազմակերպումը Եւ Գործունէութիւնը Վանի Նահանգապետութեան Շրջանում», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2003, № 2, էջ 162:

[44] Վանի նահանգապետ Վորոնովը չէր ընդունում միլիցիայի գոյութիւնը, սակայն երբ անհրաժեշտ էր լինում՝ օգտւում էր նրա ծառայութիւնից (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 2, շրջ., 3):

[45] «Վերաշինութեան Գործը Վանում»: 1916 Հոկտեմբերի 7ին Հայաստանից հեռանալուց յետոյ Չանգալեանը անդամագրւում է ֆրանսիական զօրքի կազմում գործող Արեւելեան Լեգէոնում (Ք. Աւագեան, «Ամերիկահայութիւնը Հայոց Յեղասպանութեան Տարիներին», *Հայոց Յեղասպանութեան Եւ Պատմագրութեան Հարցեր*, Երեւան, 2002, № 5, էջ 112): Նա 52 հոգուց բաղկացած ամերիկահայերի հետ եկել էր, որպէսզի անդամագրուի հայ կամաւորական շարժմանը, սակայն տեղեկանալով, որ ռուսական հրամանատարութիւնը որոշել է լուծարել կամաւորական խմբերը, ցանկութիւն է յայտնում իր համախոհների հետ անդամագրուել Վանի միլիցիային («Տեսակցութիւն Մը (Վանի Միլիցիայի Մասին»), *Հորիզոն*, 1916, № 210, 21 Սեպտեմբեր):

[46] «Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի Շրջաբերականը»:

[47] Նոյն:

[48] «Տեղեկութիւններ Վանի Մասին», նոյն, 1915, № 230, 18 Հոկտեմբեր:

[49] «Վասպուրականի Արձագանգներ», նոյն, 1915, № 257, 19 Նոյեմբեր:

[50] «Ընթացիկ Կեանքը Վանում», *Վան-Տոսպ*, 1916, № 11, 7 Փետրուար, էջ 14:

[51] «Վասպուրականի Նահանգապետի Յայտարարութիւնը», *Մշակ*, 1915, № 262, 26 Նոյեմբեր:

[52] «Վան Ուղեւորվող Յանձնախումբը», *Մշակ*, 1915, № 264, 28 Նոյեմբեր:

[53] «Նամակ Վասպուրականից», *Մշակ*, 1916, № 15, 23 Յունուար:

[54] *Վան-Տոսպ*, 1915, № 1, 29 Նոյեմբեր, էջ 16. նաեւ՝ «Դրութիւնը Վանում», *Մշակ*, 1915, № 265, 1 Դեկտեմբեր:

[55] «Տեղեկութիւններ Վանից», *Վան-Տոսպ*, 1915, № 1, 29 Նոյեմբեր, էջ 16. նաեւ՝ «Նամակներ Վանէն», *Հովիտ*, Թիֆլիս, 1916, № 7, 21 Փետրուար, էջ 108:

[56] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1979, թ. 3. նաեւ՝ Ռ. Սահակեան, «Փաստաթղթեր Վասպուրականի Վերաշինութեան Վերաբերեալ (1915-1916 թթ.)», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2008, № 2, էջ 25:

[57] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1979, թ. 3. նաեւ՝ Սահակեան, «Փաստաթղթեր Վասպուրականի», էջ 25: Կաթողիկոսին ուղուած 1915 Նոյեմբերի 11ի նամակում մի խումբ վանեցիներ խնդրում էին որքան հնարաւոր է արագ Վանում հոգեւոր առաջնորդ

կամ որեւէ հոգեւոր ներկայացուցիչ նշանակել, պատճառաբանելով՝ *«Որպէս զի հովուէ հոն վերադարձող ժողովուրդը, հոգալով անոր հոգեւոր, սննդեան, առողջապահական եւ այլն պէտքերը տեղւոյ վրայ եւ յընթացս իւր պաշտօնավարութեան եւ կամ ի դէպս ոեւէ նահանջի կամ այլ պարտականութեան ռուս. Տեղական վարչային եւ զինուորական իշխանութեանց հետ բարւոք յարաբերութեամբ կարող ըլլայ, կարելի եղած պաշտպանութիւնը ընել իր հօտին»* (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1979, թ. 1-2. նաեւ՝ Սահակեան, «Փաստաթղթեր», էջ 26»:

[58] «Տեղեկութիւններ Վանից», *Մշակ*, 1915, № 277, 15 Դեկտեմբեր:

[59] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1979, թ. 7-8. նաեւ՝ Սահակեան, «Փաստաթղթեր», էջ 27:

[60] Նոյն, թ. 7-8. նաեւ՝ Սահակեան, «Փաստաթղթեր», էջ 27:

[61] Նոյն, թ. 11:

[62] Փորձառու գիւղատնտեսներն առաջարկում են Վանում լայնօրէն օգտագործել ջերմոցներ: Դա հնարաւորութիւն կը տայ 2-3 ամսից բերք ստանալ փոխան՝ 4-5 ամսից: Մասնագէտը, որ եղել է Եւրոպայի տարբեր երկրներում, Կովկասում ու Եգիպտոսում գրում է. *«Ոչ մէկուն* (թուարկուած երկրներում - Ռ.Ս.) *մէջ (բացի Կ. Պոլսէն) չեմ գտեր այնքան համեղ, նուրբ եւ փարթամ տերեւներով բանջարեղէններ, ինչպիսին է Վանինը, միայն դժբախտութիւնը այն է, որ վանեցին իր համեղ բանջարեղէնները երկար վայելելու բախտը չունի, որովհետեւ... ծմեռը շուտ է հասնում, իսկ գարունը ուշ»* («Գիւղատնտեսութեան Դրութիւնը Վանի Մէջ», *Գիւղատնտես*, Թիֆլիս, 1916, № 17, 31 Դեկտեմբեր, էջ 236):

[63] «Դրութիւնը Վանում», *Մշակ*, 1915, № 269, 5 Դեկտեմբեր: 1916 Յունուարի դրութեամբ Վանի բնակչութեան թիւը հասաւ 5139ի, որոնցից 2435 տղամարդ, 1516 կին, 919 երեխայ, 201 որբ եւ 382 ասորի («Շաբաթական Լուրեր», *Վան-Տոսպ*, Թիֆլիս, 1916, № 8, 17 Յունուար էջ 16):

[64] Դեկտեմբերի դրութեամբ որբերի թիւը մօտ 300 էր («Տեղեկութիւններ Վանից», *Մշակ*, 1915, № 277, 15 Դեկտեմբեր): Տերմէնը նախատեսում էր որբերի համար հիմնել ապաստարաններ, հողագործական ագարակներ եւ արհեստանոցներ («Ընթացիկ Կեանքը Վանում», *Վան-Տոսպ*, 1916, № 11, 7 Փետրուարի, էջ 15):

[65] Տերմէնի կնոջ անուան հետ հաւանաբար շփոթմունք կայ: Ենթադրում ենք, որ կամ տիկինը երկու անուն է ունեցել՝ Ադելաիդա եւ Անտուանետա, կամ էլ Աթանասեանը շփոթել է նրա անունը, որը մեր կարծիքով քիչ հնարաւոր էր:

[66] Տերմէնը տիֆով հիւանդացել էր, երբ *«Թաղէ թաղ պտտելով անձամբ հաւաքել է որբեր եւ իր կառքին մէջ դնելով՝ տարել որբանոց»* («Ամփոփում Ա. Աթանասեանի Զեկուցման Վանի Վիճակի Մասին», *Վան-Տոսպ*, 1916, № 18, 17 Մարտ, էջ 10):

[67] «Վանի Շրջանապետը Հիւանդացած», *Մշակ*, 1915, № 270, 6 Դեկտեմբեր:

[68] «Նամակ Վասպուրականից», *Մշակ*, 1916, № 15, 23 Յունվար:

[69] «Վերաշինութեան Գործը Վանում», *Մշակ*, 1915, № 272, 9 Դեկտեմբեր:

[70] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1289, թ. 22:

[71] «Փախստականների Վիճակը», *Մշակ*, 1915, № 273, 10 Դեկտեմբեր:

[72] «Տեղեկութիւններ Վանից», *Վան-Տոսպ*, 1916, № 7, 10 Յունուարի, էջ 13: Վասպուրականում ապաստանած հայերի կարիքների համար ռուսական կառավարութիւնը որոշել է տրամադրել 28423 ռուբլի (*Վան-Տոսպ*, 1916, № 7, 10 Յունուար, էջ 15):

[73] «Դէպի Վան», *Մշակ*, 1915, № 278, 16 Դեկտեմբեր:

[74] «Տեղեկութիւններ Վանից», *Վան-Տոսպ*, 1916, № 7, էջ 13: Պէտք է ընդգծել, որ Արեւելեան Հայաստանի տնտեսութիւնն իվիճակի չէր զգալի օգնութիւն ցուցաբերել Վան-Վասպուրականին: Զօրահաւաքի հետեւանքով հայ տղամարդկանց որոշակի հատուածը զօրակոչուել էր բանակ, տնտեսութեան՝ գլխաւորապէս հողագործութեան եւ անասնապահութեան վիճակն օրէցօր վատանում էր աշխատող ձեռքերի ու պատերազմի հետեւանքով: Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական Ու Տնայնագործական Ընկերութեան ուսումնասիրութիւնները յստակօրէն վկայում են վերը նշուածը: Արդէն 1916ի կէսերին միայն Նոր Բայազէտի (Գաւառ) անասունների գլխաքանակը պակասել էր 51%ով, Նախիջեւանում՝ 52%ով, Դարագալեազում՝ (Վայք) 56%ով: Սրան զուգընթաց զգալիօրէն նուազել են եւ ցանքատարածութիւնները (Արտաշես Չիլինգարեան, «Հայութեան Մեծ Տագնապը: Կովկասահայ Իրականութիւնը», *Գործ*, Բագու, 1917, № 2, Փետրուար, էջ 94): Առաւել լաւ վիճակում են գտնուել Կովկասի փոխարքայութեան մահմեդականները, որոնց տղամարդիկ բանակ չեն զօրակոչուել ու հնարաւորութիւն են ունեցել զբաղուել իրենց առօրեայ աշխատանքներով ու ոչ միայն պահպանել, այլեւ մեծացնել իրենց տնտեսութիւններն ի հաշիւ ծանր վիճակում գտնուող հայերին:

[75] «Տեղեկութիւններ Վանից» *Վան-Տոսպ*, 1916, № 7, 10 Յունուար, էջ 14:

[76] «Կեանքը Վանի Մէջ», *Վան-Տոսպ*, 1916, № 14, 21 Փետրուար, էջ 14:

[77] Ընթացիկ Կեանքը Վանում», *Վան-Տոսպ*, 1916, № 10, 31 Յունուար էջ 14:

[78] Նոյն, էջ 15:

[79] «Շաբաթական Լուրեր», *Վան-Տոսպ*, 1916, № 11, 7 Փետրուար, էջ 15:

[80] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 404, թ. 253: Հեռագրում ասուած էր. «*Վանի բնակիչներից բաղկացած մի առանձին խորհրդակցութիւն, որ կայացաւ իմ նախագահութեամբ, լսելով Քաղաքների Միութեան լիազօր Աթանասեանի զեկուցումը եւ նախահաշիւը Թիմարի շրջանի անյետաձգելի կարիքների մասին, շրջանի, ուր կենտրոնացել են 4000 գիւղացիներ եւ որ շուտով, գարունը բացուելուն պէս գալու են մօտ 15,000 հոգի, դաշտային աշխատանքները սկսելու համար, որոշեց հետեւեալ մինիմալ կարիքները. սերմացուի համար 130,000 ր., լծկանի համար 90,000 ր., երկրագործական գործիքներ 30,000 ր., ընդամէնը 250,000 ր., որն անհրաժեշտ է տալ նրանց իբրեւ անտոկոս պետական նպաստ: Խնդրում եմ ուժ տալ այդ միջնորդութեան՝ ապահովելու համար ազգաբնակութիւնը եւ թիկունքը պարենաւորման եւ կենդանիների ճարակի համար*» («Շաբաթական Լուրեր», *Վան-Տոսպ*, 1916, № 12, 14 Փետրուար, էջ 16):

[81] «Շաբաթական Լուրեր», *Վան-Տոսպ*, 1916, № 13, 21 Փետրուար, էջ 15:

[82] Այդ տարիներին քրտերի զգալի մասը զբաղուած էր փրկագնով հայեր վաճառելով: Իւրաքանչիւր հայի համար նրանք պահանջում էին 18 ռուբլի, որը հաւասար էր ռուսական մէկ ոսկեդրամի: Յաճախ քրտերը միմեանց հետ արիւնալի կռիւների մէջ էին մտնում՝ հայ գերիներին տիրելու համար:

[83] «Շաբաթական Լուրեր», *Վան-Տոսպ*, 1916, № 11, 7 Փետրուար, էջ 15: Սոյն հակասութիւնները յստակ երեւացին 1916 Մայիսի 10ից 13ը Պետրոգրադում հրաւիրուած արեւմտահայ գաղթականների խնդիրներով զբաղուող հայ հասարակական-քաղաքական եւ հոգեւոր կազմակերպութիւնների համագումարում, երբ հնարաւոր չեղաւ միաւորել գաղթականութեան եւ Արեւմտեան Հայաստանի վե-

բաշինութեան խնդիրներով զբաղուող հայկական կազմակերպութիւնները (աւելի մանրամասն տե՛ս՝ Ռ. Սահակեան, *Արեւմտեան Հայաստանի Ռազմաքաղաքական եւ Վարչատնտեսական Իրավիճակը (1914 թ. Յուլիս - 1917 թ. Փետրուար)*, Երեւան, Պատմութեան Ինստիտուտ, 2015, էջ 285-97):

[84] «Դէպքերը Վասպուրականում (Հմ. Մանուկեանի Յիշատակարանը)», *ՎԷմ*, 1937, Փարիզ, թիւ 1, էջ 59:

[85] «Ամփոփում Ա. Աթանասեանի Զեկուցման Վանի Վիճակի Մասին», *Վան-Տոսպ*, 1916, № 18, 21 Մարտ, էջ 10:

[86] «Շաբաթական Լուրեր», *Վան-Տոսպ*, 1916, № 11, 7 Փետրուար, էջ 15:

[87] Այդ մեծ յաղթանակը շուքով նշւում է Վանում: Փետրուարի 9ին Վանից յղուած թղթակցութիւնում յայտնւում է քաղաքի Խաչ փողոցում կատարուած իրադարձութեան մասին. *«Փողոցի աջ կողմում շարուած էին Ա. Տերմէնը եւ քազաքները, իսկ ձախ կողմում՝ Երկրապահ գունդը: Որոտագին ծափահարութեանց եւ «հուրա»ներու մէջէն Նահանգապետը եկաւ եւ բռնեց իր տեղը: Նա զգացուած քանի մը խօսքերով արտայայտեց իր ուրախութիւնը, շնորհաւորեց մեծ յաղթանակը, ողջունեց իր քազաքներին, Վանի Երկրապահ Գնդին եւ հայ ժողովրդին: Ժողովրդի խանդավառութիւնը պահ մ'ընդհատուեցաւ կրօնական մաղթանքով, որմէ յետոյ զինուորական թափորը ժողովրդի նաղարայով* (թմբուկով - Ռ.Ս.), *զուռնայով եւ պարերով սկսաւ յառաջ շարժուիլ դէպի գեներալ Կ-ի* (Պիոտր Կալիտին, 1853-1927, Կովկասեան I բանակային զօրախմբի հրամանատար - Ռ.Ս.) *բնակարանը: Թափորի առջեւէն կ'երթար երկրապահ գնդի հրամանատար Եկարեան, որուն կը հետեւէին Երկրապահ եւ քազաքներու գնդերը, ապա Պ. Թերմէնը իր ընտանիքով եւ խուռներամ բազմութիւնը: Գեներալը իր բնակարանի դռան առաջ դիմաւորեց թափորին: Նա նոյնպէս շնորհաւորեց ռուսական բանակի պատմական յաղթանակը: Ռուսական եկեղեցիի բակին մէջ կատարուած մաղթանքէն յետոյ գեներալը նորէն խօսեց. հայ ժողովրդին ուղղելով իր խօսքը՝ նա ըսաւ, որ Էրզրումի անկումով՝ ընդմիշտ հայերը ազատուած պէտք է համարիլ թիւրքական լուծէն, շեշտեց հայ կամաւորներու եւ Վան Երկրապահ գնդի կատարած կարեւոր ծառայութիւնը. իր վերջին կեցցէն ուղղեց Վանի Երկրապահ գնդի «նաչալնիկին»* (պետ, հրամանատար - Ռ.Ս.): *Թափորը վերադարձաւ իր տեղը նոյն խանդավառութեամբ, ազգային երգերով եւ պարերով»* («Թղթակցութիւններ», *Վան-Տոսպ*, 1916, № 13, 21 Փետրուար, էջ 12-13):

[88] Անդամներն էին՝ Կ. Զարեհեանը, Մ. Բազէեանը, Ա. Փեհրիզեանը եւ Միրաքեանը («Կեանքը Վանի Մէջ», *Վան-Տոսպ*, 1916, № 14, 28 Փետրուար, էջ 14):

[89] «Ամփոփում Ա. Աթանասեանի Զեկուցման», էջ 10:

[90] Եկարեան, էջ 267:

[91] Միլիցիա՝ (լատ.՝ militia - զինուորականութիւն, աշխարհազօր): 1917ի փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ Ռուսաստանում ոստիկանութիւնը կոչուել է միլիցիա: Այստեղ՝ պետք է հասկանալ աշխարհազօրային, ոչ-կանոնաւոր կազմաւորում, որը բացի ոստիկանութեանը յատուկ գործառոյթներից, նաեւ կատարում էր ներքին զօրքերին յատուկ պարտականութիւններ:

[92] Необходимость увеличения штата Ванского правительства "Армянский вестник", Մոսկուա, 1916, № 20, 12 Յունիս, էջ 21: (Վանի կառավարության հաստիքների աւելացման անհրաժեշտութիւնը *Հայկական լրատու*):

[93] Ա. Դարբինեանը այս «նահանջների» մասին գրում է. «*Ռուս զօրամասերը երկու քայլ առաջ կ'երթային, քայլ մը եր կու գային: Անոնց կրունկէն կախուած փախստականները Երեւան-Վան եւ Կարս-Ալաշկերտ գիծը «ջուրի ճամբայ» էին դարձուցեր, հարկադրուած էին երեք չորս անգամ երթալ ու գալ մէկ տարուան ընթացքին*» (Դարբինեան, էջ 341-2):

[94] ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 122, թ. 2:

[95] Նոյն:

[96] Նոյն, թ. 2:

[97] Նոյն, ֆ. 28, g. 1, գ. 171, թ. 12:

[98] Նոյն, ֆ. 57, g. 5, գ. 122, թ. 2 շրջ.: Կողոպտիչները իւրացնում են Քաղաքների Միութեան եւ ամերիկեան միսիոնէրների պահեստների ապրանքները, իսկ շէնքերը հրդեհում, հաւանաբար, որպէսզի թաքցնեն կողոպուտի հետքերը:

[99] Նոյն, ֆ. 57, g. 5, գ. 122, թ. 2 շրջ.:

[100] Նոյն, թ. 3:

[101] «Հորիզոնի» Թղթակիցներից», *Հորիզոն*, 1916, № 236, 22 Հոկտեմբեր:

VAN PROVINCE DURING THE GOVERNERSHIP OF ALFRED YOSIF TERMEN (1915 OCTOBER-1916 SEPTEMBER)

(Summary)

RUBEN SAHAKIAN
rubensahakyan58@gmail.com

After the July 1915 Russian withdrawal from Van, the Russian military leadership did not restore the Armenian governorship of Vaspurakan; rather it formed the Provincial rulership of Van, headed by General Pavel Voronov. Police Sergeant Alfret Termen, an experienced officer who had served for years in Central Asia and the Far East and had authored two ethnographic papers, was appointed head of the Van district.

Before his arrival in Van, Termen ordered the formation of an Armenian police force headed by Armenag Yegarian, the military leader of Van in 1915 and a member of the Armenian Sahmanatir Ramgavar (Constiotutional Democratic) Party. His deputy was Jim Chankalian, a member of the Veragazmial Henchagian (Reformed Henchag) Party, and an ex-captain of the US army.

In Novemmber 1915, after his arrival in Van, Termen ordered the formation of local governance bodies, municipalities, agricultural committees, rural governing bodies, etc. He personally went through the city and collected orphan children. Unlike other Russian officials, he brought to Van his wife and children, an unprecedented step. He petitioned Catholicos Kevork V to restore some of the city churches and send clerics to serve the spiritual needs of the city population. He was instrumental in fighting against contagious diseases and actively pushed for the opening of shops, workshops and institutions in the city, which were to satisfy the needs of its gradually increasing population. Due to his special pro-Armenian activities Termen was able to win the love and respect of the Armenian community.